



ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Սիրելի ընթերցող,

Քո դատին է ներկայացվում «Բանբեր Հայաստանի գրադարանների» հանդեսի երկրորդ համարը: Հոդվածներ են ներկայացված հետևյալ թեմատիկ ուղղություններով՝ «21-րդ դարի գրադարան», «Գրադարանային վիճակագրություն և վերլուծություն», «Գրքի տոնավաճառներ և ցուցահանդեսներ», «Հայկական գրադարանային ասոցիացիա», «Մշակութային ժառանգություն», «Գրադարան. տեսություն և պրակտիկա»: Ներառված են նաև հաղորդումներ:

Քանի որ, թե՛ Սփյուռքում և թե՛ Հայաստանում անընդհատ բարձրացվում է Հայաստանի ազգային գրադարանի հիմնադրման տարեթիվը, հարկ ենք համարել վերատպել վաստակաշատ գրադարանավար Արամ Բաբայանի «Ե՞րբ է հիմնադրվել հանրային գրադարանը» հաղորդումը՝ տպագրված «Գրադարանավար» հանդեսի 1961 թ. երրորդ համարում: Հուսով ենք, որ հաղորդման արտատպությունը անկախության սերնդին թույլ կտա վերաիմաստավորել 1960-ականներից շրջանառության մեջ դրված որոշ իրողություններ:

Անդրադարձ կա Մելքոնյան եղբայրների եզակի դերին Հայաստանի ազգային գրադարանի կայացման գործում: Սրանով փորձ ենք արել մեր երախտագիտությունը հայտնել այն բազմաթիվ անհատներին, մշակույթի, գիտության երախտավորներին, ովքեր անշահախնդրորեն նվիրվել են գրադարանային հավաքածուների շարունակական համալրմանը եզակի հրատարակություններով, և ում անունները հանիրավի մոռացության են մատնվել:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹՎԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(ՀԱՅԱՑՔ 25 ՏԱՐՎԱ ԱՆՑԱԾ ՈՒՂՈՒՆ)¹

Բանալի բառեր՝ գրադարանների ավտոմատացում, թվային գրադարաններ, համահավաք գրացուցակներ

Keywords. Digital Libraries, Library Automation, Union Cataloges.

4. ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆՆԵՐԸ.

Որպես նախորդ 15 տարիներում ձեռք բերածի տրամաբանական շարունակություն՝ գրադարանային հանրությունը 2000-ականների կեսերից իր առջև մասշտաբային նոր խնդիրներ դրեց և ձեռնամուխ եղավ դրանց լուծմանը: Այդ խնդիրներն էին.

- «Հայաստանի գրադարանների համակարգչային ցանցի ստեղծում»
- «Գիտական ուղղվածության բովանդակային շտեմարանների ձևավորում»:

Հարկավոր էր տեղային և միջազգային հարթակներում դիմակայել մարտահրավերներին: Տեղային էին.

- «Հայաստանի էլեկտրոնային գրադարան» միավորման անդամների միջև համաժամանակյա (սինքրոն) աշխատանքի կազմակերպումը, որը ներառում է համակարգչային հզորությունների համատեղ օգտագործում, թվային գրադարանի մոդուլների ձևավորման ծրագրային ապահովման համատեղ նախագծում և սպասարկում, համակարգչային ցանցի կառավարում, համահավաք գրացուցակում մատենագիտական համատեղ գրառումների իրականացում, մասնագիտական վերապատրաստումների անցկացում:
- Գրադարանային հանրության առջև ծառացած նոր խնդիրների ներկայացում պատկան մարմիններին:
- Գրադարանավարների համար մագիստրոսական նոր առարկայաշարերի ներկայացում և կարճաժամկետ վերապատրաստումների անցկացում:
- Մասնակցություն գրադարանային գործին առնչվող օրենսդրական աշխատանքներին:

Երկրորդ մարտահրավերը ենթադրում է Հայաստանի գրադարանային հանրության ինտեգրումը միջազգային գրադարանային տարածքին, մասնակցությունը միջազգային տարբեր ծրագրերի: Այս դիտանկյունից խիստ արդյունավետ էր 2004 թ. Եվրամիության «Տեմպուս» ծրագրի շրջանակում երկամյա տնօրոշումը իրականացված

¹ Սկիզբը տե՛ս «Բաներ Հայաստանի գրադարանների», 2015, թ. 1:

«Երևանի պետական համալսարանի գրադարանում թվային կրթական ծառայությունների և բովանդակության ձևավորման կենտրոնի ստեղծում» UM_JEP-25008-2004 նախագիծը, որի շրջանակում Երևանի պետական համալսարանի գրադարանը Միդլսեքս համալսարանի (Մեծ Բրիտանիա, Լոնդոն) և Հանովերի համալսարանական գրադարանի (Գերմանիա) հետ համատեղ ձեռնամուխ եղավ Բոլոնիայի գործընթացից բխող համալսարանական գրադարանին առաջադրվող պահանջները Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում կարևորելու և գրադարանային հանրությանը դրանք ներկայացնելու գործին:

Որպես հիմնական ձեռքբերում՝ ԵՊՀ գրադարանում նախագծվեց և կառուցվեց բաշխված տեղեկատվական միջավայր, որի օգնությամբ հնարավոր է դառնում ակադեմիական հանրությանը տրամադրել որակյալ թվային կրթական պաշարներ ցկյանս կրթության կազմակերպման և անցկացման համար:

Հաջորդ կարևոր ծրագիրը, որի իրականացումը գրադարանավարների աշխատատեղում և հրատարակիչների մտածելակերպում հանգեցրեց շղթայական փոփոխությունների «Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարաններին» կոնսորցիումի² նախաձեռնած «Բաց մատչելիություն»³ ծրագիրն է, որը կոնսորցիումը նախաձեռնեց 2002 թ. փետրվարի 14-ին, ստորագրելով «Բուդապեշտի բաց մատչելիության հռչակագիրը»⁴, դրանով իսկ հիմք դնելով բաց մատչելիության սկզբնավորմանը և տարածմանը աշխարհում: Հռչակագրի հիմնադրույթն է. համացանցի և համակարգիչների ակտիվ ներթափանցմամբ կյանքի բոլոր բնագավառներ ի հակակշիռ կոմերցիոն հրատարակությունների, հարկավոր է ստեղծել գիտական հաղորդակցման նոր համակարգ՝ ազատորեն հասանելի հանրության բոլոր շերտերին, հիմնականում զերծ հեղինակային իրավունքի և արտոնագրման մոդելների կողմից հարուցած խոչընդոտներից և արգելանքներից: Բաց մատչելիության շարժումը արագորեն տարածվեց աշխարհում, հիմնական տարածողները և ջատագովները հենց գիտնականներն էին, ովքեր ցանկանում էին, որ իրենց գիտական արդյունքները արագորեն հասանելի դառնան հետազոտողներին:

Հայաստանում ևս բաց մատչելիության գաղափարը գտավ աջակիցներ: Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանը դարձավ այդ գաղափարը տարածողներից մեկը, և 2008 թվականին «Բաց հասարակության հիմնադրամ» կազմակերպության դրամաշնորհով, Գիտությունների ազգային ակադեմիայում սկսվեցին «Հայկական մաթեմատիկական հանդես»⁵ և «Ֆիզիկայի հայկական հանդես»⁶ էլեկտրոնային գիտական գրախոսվող ամսագրերի հրատարակումը: Նորարարական նման նախաձեռնությունը տվեց իր դրական արդյունքը: Գիտությունների ազգային ակադեմիայի բոլոր ամսագրերի գլխավոր խմբագիրները ցանկություն

² <http://www.eifl.net/>

³ <http://www.eifl.net/programmes/open-access-programme>

⁴ <http://www.budapestopenaccessinitiative.org/>

⁵ <http://www.flib.sci.am/arm/journal/Math/index.html>

⁶ <http://www.flib.sci.am/arm/journal/Phys/index.html>

հայտնեցին, բացի թղթային տարբերակից ունենալ նաև աշխատանքների էլեկտրոնային համարժեքները: ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը կազմակերպեց այդ ամսագրերի էլեկտրոնային տարբերակների պատրաստումը և հասանելիությունը համացանցում, ինչպես նաև բաց մատչելիության պահոցում սկսեց տեղադրել ԳԱԱ բոլոր ամսագրերի թվայնացված տարբերակները:

Բաց մատչելիության փիլիսոփայության տարածմանը զուգահեռ հարկավոր էր գրադարաններին՝ որպես շահ չհետապնդող կառույցների, այնպիսի ծրագրային ապահովում առաջարկել, ըստ որի՝ հենց գրադարանավարներն իրենք ի վիճակի լինեն ձևավորելու և իրենց ուժերով լուծելու թվային գրադարանի կառուցմանը միտված տարաբնույթ խնդիրները:

Կոնսորցիումը կատարեց ևս մեկ հեղափոխական քայլ՝ սկսեց զարգացող և անցումային փուլում գտնվող երկրների գրադարանավարներին ներկայացնել Բաց/ազատ կոդերով ծրագրաշարերը (ԲԿԾ): 2006 թ. հոկտեմբերի 29-ին, Իտալիայի Էրեմո ավանում տեղի ունեցավ նախաձեռնող խմբի անդրանիկ հավաքը, որին հաջորդեցին մի քանի կլոր սեղաններ և աշխատանքային հավաքներ^{7,8,9}: Արդյունքում գրադարանավարների մոտ տեղի ունեցավ մտածելակերպի փոփոխություն. նրանք հասկացան, որ ծրագրային ապահովման կոմերցիոն փաթեթներից բացի, որոնք շատ թանկ են և զարգացող երկրների գրադարաններից շատերի համար գործնականում անհասանելի, կան ծրագրեր, որոնք անվճար են, տարածվում են ազատ, ունեն օգտվողների լայն շրջանակ թե՛ զարգացած և թե՛ զարգացող երկրներում, սպասարկվում և շահագործվում են հենց գրադարանավարների կողմից: Նախաձեռնող խումբը պատրաստեց և ներկայացրեց «Գրադարանը հիշող սարքում» ծրագրային փաթեթը, որում ներառված են փորձարկված և երաշխավորված «Բաց/ազատ կոդերով ծրագրաշարեր» դասակարգված հետևյալ թեմատիկ ուղղություններով՝ ինտեգրացված գրադարանային համակարգեր, հավաքածուների ձևավորում և կառավարում, հղումների բացահայտիչներ, օգտվողների փոխձանաչում, էլեկտրոնային հրատարակչական համակարգեր, հեռավար ուսուցում: Հայաստանի երկու առաջատար գրադարանները՝ Հայաստանի ազգային և Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանները հաջողությամբ փորձարկում և ամենօրյա աշխատանքում կիրառում են այդ ծրագրերից շատերը, ակտիվ համագործակցում են միջազգային ԲԿԾ համայնքի անդամների հետ, և իրենց ուժերի չափով աջակցում են ԲԿԾ գաղափարախոսության տարածմանը Հայաստանի գրադարաններում:

Միջազգային համագործակցության շնորհիվ Հայաստանում ձևավորվեց գրադարանավարների մի նոր սերունդ, որն ունի տեխնոլոգիական հմտություններ, տիրապետում է ծրագրավորման լեզուների և կարող է աշխատել բոլորովին նոր միջավայրում, ինչի հավաքական անունն է «Թվային գրադարան»:

5. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ «ՄՊԻՏԱԿ ՕԶԻՔԱՎՈՐ»

⁷ Նման մի հավաք տեղի ունեցավ Երևանում 2008 թ. հունիսի 10-11-ը:

⁸ <http://www.slideshare.net/evergreenils/evergreen-in-armenia>

⁹ <https://coffeecode.net/archives/160-Introduction-to-Evergreen-at-eIFL-FOSS-ILS-workshop.html>

ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Թվային գրադարանի հիմնական բաղադրիչներն են՝ հաշվողական հզորությունները, կապի և հաղորդակցության միջոցները, ծրագրային ապահովումը, տվյալների շտեմարանները, օժանդակ ծառայությունները և անձնակազմը: Բնական է, որ միայն արհեստավարժ և բանիմաց աշխատակիցներ ունենալը թույլ կտա կառուցել թվային գրադարան և ապահովել դրա կենսունակությունը:

Տեխնոլոգիական զարգացումներին համահունչ ձևավորվում է գրադարանավարի նոր կերպարը՝ դրսևորվելով որպես

- տեղեկատվական գիտության բնագավառի փորձագետ, ով տիրապետում է տվյալների որոնման ու արտածման, գիտելիքի կառավարման, տեղեկատվության նախագծման ու մատուցման մեթոդաբանությանը,
- կառավարիչ, ով համակարգում է տարբեր ծրագրեր՝ նախագծելով ապագայի գրադարանի դերը և զարգացման հեռանկարները հարափոփոխ աշխարհում,
- բարձր տեխնոլոգիաների մասնագետ,
- ստրատեգիական պլանավորող:

Քանի որ հիմնովին փոխվում է գրադարանավարի դերը և գործառույթները տեխնոլոգիաներով հագեցված միջավայրում, հրամայական է դառնում գիտելիքների ունեցած պաշարի մշտական համալրումը: Պահանջվում է անընդհատ կազմակերպել կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև գրադարանային ֆակուլտետների ուսանողների համար մշակել և ներդնել նորացված մագիստրոսական առարկայաշարեր՝ թվային գրադարանների կառուցման, գիտելիքի կառավարման, հեղինակային իրավունքի ներկայացման և հարակից բնագավառների համար:

Հասկանալով խնդրի կարևորությունը՝ 2008 թ. Գիտությունների ազգային ակադեմիայի Միջազգային գիտակրթական կենտրոնը և Հիմնարար գիտական գրադարանը, Վրաստանի, Ուզբեկստանի, Մեծ Բրիտանիայի, Իսպանիայի, Իտալիայի և Լատվիայի գործընկեր համալսարանների հետ համատեղ Եվրամիության JEP-14502 I-TEMPUS-2008-UK-JPCR ծրագրի¹⁰ շրջանակում ձեռնամուխ եղան «Նոր մագիստրոսական ծրագիր գրադարանագիտության և տեղեկատվական գիտության մասնագետների համար¹¹» եռամյա նախագծի իրականացմանը: Մասնակից համալսարանների և գրադարանների մասնագետների համատեղ ջանքերով մշակվեց մագիստրոսական ծրագիր՝ լիովին միտված թվային դարաշրջանում տեղեկատվական պահոցների նախագծման և կառավարման խնդիրների լուծմանը: Որպես արդյունք՝ 2009-2010 թթ. ուսումնական տարվա համար ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոնում բացվեց «Գրադարանային տեղեկատվական աղբյուրներ» մագիստրոսական ծրագիրը՝ դիպլոմավորված մասնագետներ պատրաստելու համար:

¹⁰ <http://www.flib.sci.am/eng/Tempus/index.html>

¹¹ <http://www.flib.sci.am/eng/Master/index.html>

Որպես մեկ այլ հեռանկարային ուղղություն՝ Հայաստանի ազգային գրադարանը կազմակերպում և իրականացնում է եռօրյա վերապատրաստման դասընթացներ Հայաստանի համայնքային գրադարանավարների համար¹²:

Գրադարանագիտության բնագավառում կրթական նման քաղաքականության արդյունքում ձևավորվում է գրադարանավարի նոր տեսակ՝ համակարգերի գրադարանավար, ովքեր վարժ աշխատում են որպես ծրագրավորողներ և գրադարանային կայքերի ձևավորողներ, մասնակցում են տվյալների շտեմարանների նախագծման և շահագործման աշխատանքներին, սպասարկում են գրադարաններում օգտագործվող օպերացիոն համակարգերը, ներգրավված են տարբեր մասնագիտական ֆորումներում և միևնույն ժամանակ տիրապետում են գրադարանագիտության նրբություններին:

6. ՀԱՋՈՐԴ ՄԻ ՔԱՆԻ ՏԱՐԻՆԵՐԸ. ՀԱՅԱՏԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ

ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ:

Թվային գրադարանի ձևավորման ամենաաշխատատար և բարդ օղակը բովանդակային շտեմարանների ստեղծումն է: Կլինեն դրանք մատենագիտական շտեմարաններ, թե լրիվ տեքստային նյութերի պահոցներ կամ ուղղորդող պաշարներ, սրանց ստեղծումը և կենսունակության ապահովումը պահանջում է ամենօրյա տքնաջան աշխատանք: Խնդիրը հատկապես սուր է հայաստան նյութերի պարագայում, քանի որ կա ահռելի քանակի տպագիր արտադրանք և այդ ամենը հարկավոր է

- տեղափոխել թվային միջավայր,
- ապահովել նման նյութերի հասանելիությունը տարբեր ձևաչափերով՝ որպեսզի հնարավոր լինի դրանք ընթերցել թե՛ անհատական և դյուրակիր համակարգիչների պաստառներից, թե՛ թափլետային սարքերի և ձեռքի ընթերցիչների միջոցով,
- ձևավորել էլեկտրոնային քարտարաններ,
- լրիվ տեքստային թվային նյութերը կապել համապատասխան մատենագիտական գրառումների հետ,
- կազմել հեղինակավոր գրառումների և խորագրերի աղյուսակներ և այլն:

Հաջորդ մի քանի տարիները¹³ նվիրված կլինեն այս աշխատանքների իրականացմանը: Հարկ է ձևավորել «Հայ գիրք» և «Հայ մամուլ» էլեկտրոնային շտեմարանները, հարկ կլինի պատրաստել և հաստատել հայագիտական ուղղվածության գիտական հրապարակումների շտեմարանի ձևավորման հայեցակարգը և ձեռնամուխ լինել դրա ստեղծման աշխատանքներին:

Նկատի առնելով թվայնացվող նյութերի ահռելի ծավալները՝ ծրագրատեխնիկական լուծումները պետք է հիմնված լինեն ամպային հիշողության և ամպային

¹² Ձեռնգիրքյան Կարինե. Վարպետաց դասեր: Բանբեր Հայաստանի գրադարանների, 1 (1). Էջ 73-76.

¹³ Նկատի առնելով թվայնացման ենթակա գրքերի և մամուլի էջերի քանակը աշխատանքների ավարտի ուղենիշ կարելի է պլանավորել 2030 թվականը:

հաշվարկների վրա, որոնք ներկայումս լայնորեն կիրառվում են «Ամագոն», «Գուուզլ» հսկաների կողմից:

Նման մոտեցումները կապահովեն Հայաստանում ընթացող գրադարանային աշխատանքների կայուն տեղը տեղեկատվական գիտության համաշխարհային զարգացումներում, և գիտելիքահենք հասարակության կողմից առաջադրվող մարտահրավերները դուրս չեն մղի Հայաստանի գրադարանավարներին ապագայի զարգացումներից:

TIGRAN ZARGARYAN

FROM THE HISTORY OF DEVELOPING DIGITAL LIBRARIES IN ARMENIA:

25 years of library automation in Armenian

SUMMARY

The history of automation and computerization of Armenian libraries fulfilled its 25 years – a short time for a human measurement. During this period of time Armenia became an independent state, moved from the centralized economy management system to the market based economy, integration processes with European Union structures are in an active phase. Libraries are also in a renovation and cardinal reconstruction process. This article presents the history of the library automation in Armenia from its beginnings, describes the evolution and challenges faced by the library community on its difficult way to the digitization. Could happen that I haven't described some facts and events in more details, or even, I haven't mentioned about them. I hope that those knowledgeable about these details will forgive such type of omissions, which can take place in such brief overview article.

**ՀՀ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(Ընթերցողների շրջանում կատարված հարցումների հիման վրա)

Բանալի բառեր` գրադարանային մարքեթինգ, մարքեթինգային հետազոտություն, վիճակագրական հարցում, գրադարանային մրցունակություն, տեղեկատվության հավաքագրում, ռազմավարական պլան

Keywords. Library marketing, Marketing research, Sociological questioner, Library competetiveness, Information gathering, Strategic plan

Հայաստանի գրադարանային համակարգի զարգացման կարևորագույն գործոններից մեկը գրադարանային մարքեթինգն է: Գրադարանը մրցակցային պայմաններում կարող է հասնել առավելությունների, եթե ճիշտ կիրառի մարքեթինգային գործիքակազմը, միջոցներն ու սկզբունքները, ահա ինչու մարքեթինգային միջավայրը շատ կարևոր է և հեռանկարային:

Գրադարանային մարքեթինգը պետք է զուգահեռվի ֆինանսական ու մասնագիտական գործունեությանը: Նման մոտեցման դեպքում գրադարանի ֆինանսական և մասնագիտական գործունեությունը ապահովվում է առավելագույն արդյունքներով: Ի՞նչ է գրադարանային մարքեթինգը և ինչպե՞ս կարելի է հասնել ցանկալի արդյունքի՝ հարցեր, որոնց պատասխանները փորձել ենք տալ հոդվածում:

Գրադարանային մարքեթինգ անցկացնելու համար նախ և առաջ պետք է հստակ իմանալ նպատակը, ապա ընտրել միջոցներն ու մեթոդները: 2015 թ. անցկացրած մեր հետազոտության նպատակն էր՝

1. Հետազոտել Հայաստանի ազգային և Ավ. Բսահակյանի անվան կենտրոնական գրադարանների ընթերցողների սոցիալ-դեմոգրաֆիական կազմը, նախասիրությունները, ընթերցանության դինամիկան:

2. Առանձնացնել սպասարկման ոլորտում առկա խնդիրներն ու ընթերցողների դիրքորոշումն այս հարցում:

3. Առանձնացնել ընթերցանության նկատմամբ հարցման մասնակիցների վերաբերմունքը՝ ինչպիսի՞ ընթերցանություն են նախընտրում՝ էլեկտրոնային թե՞ տպագիր:

Հետազոտության անհրաժեշտությունը բացատրվում է ընթերցող-գրադարան կապի ոչ օբյեկտիվ բնույթով: Այդ կապը կարելի է հաստատել ու ամրապնդել՝ ունենալով առաջարկությունների և դիտողությունների նոթատետր, մատյան:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ընթերցողների առավել լայն շրջանակ ապահովելու նպատակով տեղեկատվության հավաքագրումը կատարվել է 2015 թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին: Մասնակցել է 320 մարդ (160-160 հարաբերակցությամբ՝ Հայաստանի ազգային և Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարաններում):

Գրադարանների գործունեության մասին ընթերցողների կարծիքը փորձել ենք պարզել հարցաթերթիկների միջոցով:

«Ինչու՞ եք հատկապես Հայաստանի ազգային գրադարան այցելում» հարցին տրվել են հետևյալ պատասխանները՝

Ինձ անհրաժեշտ գրականությունը կա միայն այստեղ	52%
Գրադարանի դիրքը շատ հարմար է	19%
Գրադարանն աշխատում է նաև կիրակի օրերին և կարողանում ենք ժամանակը արդյունավետ օգտագործել	19%
Այստեղ աշխատում են մասնագետներ, ովքեր տալիս են տարբեր հարցերի մասին հետաքրքիր տեղեկատվություն	10%

«Ինչու՞ եք հատկապես Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան այցելում» հարցին տրվել են հետևյալ պատասխանները՝

Գրադարանի միջավայրը տրամադրող է, հաղորդակցումն ազատ ու անկաշկանդ	29%
Գիրքը կարողանում են տուն տանել և հանգիստ կատարել ցանկացած աշխատանք	39%
Գրադարանում գործող բազմաթիվ դասընթացները նպաստում են գիտելիքների զարգացմանը	32%

Ուրեմն՝ գրադարանի գործունեության առանցքը գրքային ֆոնդն է, և կարևոր նշանակություն ունեն նաև տարաբնույթ միջոցառումները: Կարծում ենք՝ միջավայրը և դիրքը որքան էլ տրամադրող ու հարմար լինեն, աղքատիկ գրքային ֆոնդի դեպքում գրադարանը ընթերցող չի ունենա:

Ավանդական գրադարանի կողքին օր օրի զարգանում է թվայինը: Ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած գրադարանը յուրաքանչյուր ընթերցողի կարողանում է ապահովել տարբեր ծառայություններով: Անհատը կարիք ունի ընթերցանության, այսինքն՝ որոշակի գրականության, ահա ինչու գրադարաններն ընթերցողներին ապահովում են բազմաբնույթ գրականությամբ: Երկու գրադարաններն էլ այսօր առաջարկում են որոշակի ծառայություններ, որոնք հիմք են հանդիսանում կոմերցիոն և ոչ կոմերցիոն մարքեթինգի համար:

Վիճակագրական հարցումների արդյունքում պարզվեց, որ երկու գրադարանների ընթերցողների զգալի մասը Երևանի բնակիչներ են, ՀԱԳ-ում ընթերցողների մեջ գերակշռում են իգական սեռի ներկայացուցիչները: Նշենք նաև, որ Ավ. Իսահակյանի

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

անվան գրադարանում գրքերը տուն տրվում են միայն Երևանում գրանցում ունեցողներին: Երկու գրադարաններում էլ ընթերցողների գերակշռող մասը ուսանողներ են: Նրանց մեծ մասը օգտվում է գրադարաններից՝ ուսման ընթացքում և աշխատանքում առաջացած անհրաժեշտությունից ելնելով, ինչպես նաև ընթերցանության պահանջմունքը բավարարելու համար: Հարցման արդյունքներից պարզ դարձավ, որ ընթերցող-մասնակիցների մեծ մասը գրադարան է այցելում հաճույքով և գոհ է գրադարանի սպասարկման համակարգից: ՀԱԳ-ի տարբեր նշանակության ընթերցասրահների աշխատանքը բարձր է գնահատվել, իսկ Ավ. Իսահակյանի անվան գրադարանում առանձնացել է Մանկական գրականության բաժինը, որը փոքրիկ ընթերցողների համար պարբերաբար կազմակերպում է հեքիաթի ընթերցում և մուլտֆիլմերի ցուցադրում: Մարքեթինգային գործունեության տեսանկյունից բաժինը հաճախ կապ է հաստատում դպրոցների, քոլեջների, վարժարանների և մանկապարտեզների հետ՝ նրանց գրադարանի միջոցառումներում ներգրավվելու համար: Սա կարևոր քայլ է՝ ընթերցողին վաղ հասակից գրադարանին հաղորդակից դարձնելու համար:

Էլեկտրոնային և տպագիր գրքերի նկատմամբ վերաբերմունքը դիտարկելիս տարբեր էին մոտեցումները: Ֆունկցիոնալ տեսանկյունից երիտասարդության շրջանում էլեկտրոնային նյութերը տպագիր տարբերակներից նախընտրելի են: Պարզվում է, որ երկու գրադարաններում էլ երիտասարդների համար տպագիր գրքերը (հատկապես մասնագիտական) մեծապես զիջում են էլեկտրոնային գրքերին մի շարք պատճառներով՝

- Համացանցով հնարավոր է ավելի արագ գտնել անհրաժեշտ գիրքը և միանգամից կարդալ:
- Հնարավոր է միաժամանակ կարդալ և սոցիալական ցանցեր այցելել:
- Համակարգչով ընթերցելը թույլ է տալիս զուգահեռ նշումներ կատարել:
- Տպագիր գիրքը գումար արժե, մինչդեռ համացանցում հնարավոր է գտնել գրքի անվճար էլեկտրոնային տարբերակը:

Ավելի բարձր /50-ից բարձր/ տարիքային խմբի մասնակիցների համար նախընտրելի է տպագիր տարբերակը: Սա գուցե պայմանավորված է այն հանգամանքով, որ մեծահասակներն առաջնորդվում են սովորույթով կամ էլ լավ չեն տիրապետում էլեկտրոնային նյութերի հետ աշխատելու հմտություններին: Գրքի տեսակի ընտրության առումով հարցվողների ավելի քան 85%-ը նախընտրում է տպագիր տարբերակը: Էլեկտրոնային տարբերակը նախընտրելի է հարցվողների շուրջ 10%-ի համար և աուդիո տարբերակներ՝ 5%:

ՀԱԳ-ում տպագիր գրականության ընթերցանության ընդհանուր պատկերն այսպիսին է՝

գեղարվեստական գրքերի ընթերցանություն՝ 38%
տպագիր թերթեր, ամսագրեր՝ 29%-ը,
մասնագիտական գրքեր՝ 33%-ը:

Հարցման նպատակներից էր նաև պարզել ընթերցողների հաճախումների հաճախականությունը սեզոնային (եղանակային) փոփոխությունների ընթացքում:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱԳ-ի ընթերցողների 54 %-ը, ըստ մեր կողմից անցկացված սոցիոլոգիական հարցումների, ուսանողներ են, որոնք ուսումնառության տարիներին ակտիվորեն օգտվում են հենց այս գրադարանից: Նրանց ճնշող մեծամասնությունը կանոնավոր կերպով գրադարան է հաճախում զարնանային և աշնանային քննաշրջանի նախօրյակին՝ ուսումնական ծրագրերի լրացման և նոր գիտելիքների ձեռքբերման համար: Ահա ինչու ամռանը հաճախումների թիվը կտրուկ նվազում է: Այստեղ առանձնացնենք միայն արտասահմանում սովորող ուսանողներին, ովքեր իրենց արձակուրդի շրջանը տրամադրում են ՀԱԳ-ում պահպանվող տարբեր հավաքածուների ուսումնասիրմանը: Գրադարան չայցելելու պատճառներից է նաև շոգը, ուստի ընթերցանության բացը լրացնում են թվայնացված գրականության միջոցով՝ առանց գրադարան այցելելու: Նույն պատկերն է նաև Ավ Իսահակյանի անվան գրադարանում: Գարնանային շրջանում գրադարանը լի է ընթերցողներով: Հատկապես ակտիվ շրջան է համարվում մայիս ամիսը: Գրադարանի համար պասիվ շրջան են համարվում հուլիս և օգոստոս ամիսները¹: Աշնանը՝ սեպտեմբեր ամսից սկսած, կտրուկ աճում է ընթերցողների թիվը. հիմնական ընթերցողներ են հանդիսանում ուսանողները: Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանը ապահովում է քաղաքային բնակչության գրադարանային-տեղեկատվական մատչելիությունը մեթոդական, մասնագիտական և տեղեկատվական ծառայություններով: Գրադարանում կազմակերպվող միջոցառումները հասարակության տարբեր շերտերի և գրադարանի ընթերցողների հետ յուրատեսակ կապի և համագործակցության միջոց են հանդիսանում: Հաճախակի միջոցառումները, սեմինարները, քննարկումները, վերապատրաստումները գրադարանը դարձնում են ընթերցողների հավաքատեղի:

Հարցման արդյունքների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ ՀԱԳ-ը մրցակցային շուկայում կայուն դիրք է գրավում, սակայն դիրքերն էլ ավելի ամրապնդելու համար, պետք է պարբերաբար իրականացնի մարքեթինգային հետազոտություններ՝ ընթերցողների խելամիտ պահանջները իրականացնելու համար: Գրադարանավարի և ընթերցողի համատեղ գործունեությունը օգնում է ՀԱԳ-ին հասնել որոշակի արդյունքի և լուծել որոշ կարևոր խնդիրներ: Ցանկալի է, որ ՀԱԳ-ում կազմակերպվեն տարաբնույթ դասընթացներ, որոնք ինչ-որ կերպ օգտակար կլինեն ընթերցողներին և կկտրեն նրանց միօրինակ առօրյայից:

Ավ. Իսահակյանի անվան գրադարանը սպասարկման համակարգում հասել է հաջողությունների, սակայն գրադարանն ունի շատ անելիքներ՝ գրքային ֆոնդը համալրելու ուղղությամբ: Կարևոր է նաև, որ գրադարանում լինեն պատճենահանման, տպիչ սարքեր, որոնք կհեշտացնեն ընթերցողների աշխատանքը:

Ի՞նչից են դժգոհ մեր ընթերցողները, ի՞նչ են առաջարկում և ի՞նչ սպասելիքներ ունեն գրադարաններից: Ներկայացնենք նախ ՀԱԳ-ի ընթերցողների կարծիքը:

Ընթերցողներն ավելորդ են համարում ուստիկանների հսկողությունը՝ նշելով, որ կարելի է անցնել էլեկտրոնային հսկողության նորագույն համակարգերի, ինչը,

¹ Այդ ամենի մասին են վկայում նաև մեր կողմից ամռան ամիսներին անցկացվող սոցիոլոգիական հարցումները՝ շուրջ 70 օր՝ ի տարբերություն զարնանային գործնական շրջանի, որը տևել է 20 օր:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

կարծում ենք, հեռանկարային հարց է: Շենքային պայմանների բարելավման հարցը օրակարգային է և՛ ընթերցողների, և՛ ՀԱԳ-ի աշխատակիցների համար:

Գրադարանն իրականացնում է ներքին միջավայրի բարելավման աշխատանքներ, ուստի համոզված ենք, որ կարճ ժամանակ անց գրադարանը կլինի գեղեցիկ, հարմարավետ կահավորված, ապահովված գերհզոր համակարգիչներով: Ըստ արդյունքների՝

ա. Կարևոր է էլեկտրոնային գրացուցակներով սպասարկումը, նաև հեռախոսագանգով պատվերի ընդունումը: Մեր կարծիքով, պատվերի ընդունումը հեռախոսով կազմակերպելը մարքեթինգային լուրջ քայլ կլինի մեծ քանակի ընթերցողներով գրադարանը համալրելու գործում:

բ. Ընթերցողների 58%-ը գրքի մերժման փաստի շուրջ առաջարկում են այն տեսակետը, որ մեկ օրինակ գիրքը պետք է պատճենահանվի և միշտ առկա լինի ընթերցասրահ տրվելու համար:

գ. Ընթերցողների զգալի մասը, առաջարկել է անհատական բաժնույթը դարձնել շատ մատչելի ուսանողական զանգվածի համար (նշենք, որ անհատական բաժնույթի մեկ ամսվա արժեքն է 1500 դրամ):

դ. Ընթերցողների 22%-ը պնդում են, որ գրադարանում պետք է գործի բուֆետ, առկա լինեն սուրճի սարքավորումներ գրադարանի սպասարկող օղակներին կից: Ընթերցողների 20% էլ առաջարկում են, որ գրադարանի ներսում լինի գրենական պիտույքների վաճառակետ:

ե. Ընթերցողներն անհրաժեշտ են համարում գրադարանի ֆոնդերն համալրել օտարալեզու գրականությամբ, ձեռք բերել ժամանակակից գրականություն հենց հրատարակիչներից, համալրել ֆոնդերը մասնագիտական գրքերով:

զ. Ընթերցողների զգալի մասը պահանջում է ավելացնել պատճենահանման սարքերը, գրադարանի բակը դարձնել բարեկարգ, հանգստի այգի:

է. Ընթերցողներն անհրաժեշտ են համարում գրադարանի ողջ տարածքում տեսնել ազգային իրեր, տարրեր, ցանկանում են գրադարանը տեսնել ազգայինը պահող, ազգային մշակույթը խթանող լուրջ համալիր:

ը. Ընթերցողները խնդրանք-հորդոր են ներկայացրել ՀԱԳ-ին, որ գոնե ուսումնական քննաշրջանների նախօրյակին գրադարանի սպասարկման սրահներն աշխատեն ավելի երկար ժամային գրաֆիկով:

Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի ընթերցողներն առաջարկում են.

ա.	Լավագույն գեղարվեստական և մասնագիտական գրքերը կամ չեն լինում կամ էլ, որպես կանոն, զբաղված են լինում ներքին կամ անհատական բաժնույթների մոտ: Անհրաժեշտ է ավելացնել այդ գրքերի քանակը, փոշեզրկել և ուղարկել կազմատուն	36%
բ.	Գրադարանի տարածքը փոքր է և քիչ է հարմարավետությունը	31%
գ.	Գրադարանում՝ հատկապես սպասարկման օղակներում, ցանկալի	25%

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

	կլիներ, որ աշխատակիցները լինեն երիտասարդ: Այսօր ցածր է մասնագիտական մակարդակը	
դ.	Գրադարանում ամռանը շատ շոգ է, բացակայում են օդորակիչները և անհնար է լինում զբաղվել ընթերցանությամբ	8%

Ամփոփելով՝ նշենք, որ Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում հաճախակի պետք է իրականացվեն մարքեթինգային վերլուծություններ՝ հասկանալու համար՝ ինչ է ուզում ընթերցողը: Ժամանակն է քայլեր ձեռնարկել գրքային ֆոնդը համալրելու ուղղությամբ: Անհրաժեշտ է հասկանալ ընթերցողին, հաշվի առնել նրա կարծիքը: Անհրաժեշտ է քաղաքապետարանի հետ միասին քննարկել և քայլեր ձեռնարկել գրադարանի տարածքի մեծացման ուղղությամբ: Ընթերցողները նշել են, որ գրադարանում պակաս է հարմարավետությունը՝ թույլ է լուսավորությունը, ընթերցասրահները փոքր են և հնարավոր չէ լիարժեք հանգստանալ, գրադարանը երեկոյան շուտ է փակվում, իսկ կիրակի օրերին ընդհանրապես չի աշխատում:

Մարքեթինգային հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ երկու գրադարաններում էլ սպասարկման մակարդակը գրեթե նույնն է. Տարբերությունը, թերևս, գրքային ֆոնդն է: Ընթերցող-ուսանողները հաճախակի են օգտվում Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանից, քանի որ հնարավորությունն ունեն գիրքը տուն տանելու: Բայց նաև նշում են, որ ժամանակն է գրադարանը համալրել տարատեսակ գրքերով և ամսագրերով: Ընթերցողների զգալի մասը կարևորում է այս գրադարանում կազմակերպվող դասընթացների առկայությունը և ցուցաբերում է ակտիվ մասնակցություն դրանցում, առաջարկում է ստեղծել հանգստի մի սենյակ, որտեղ ընթերցողները կկարողանան հաղորդակցվել միմյանց հետ և կարծիքներ փոխանակել: Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում սպասարկման որակն առավել արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է ավելացնել համակարգիչների քանակը:

Ամփոփելով՝ նշենք, որ գիտատեղեկատվական առաջընթացի այս դարաշրջանում փոխվել է վերաբերմունքը գրադարանների նկատմամբ: Դա բնական է, որովհետև գրադարանները համարվելով ազգային և համաշխարհային տպագիր մշակույթի գանձարաններ՝ նպաստել են հասարակության գիտատեխնիկական առաջընթացին՝ մարդկությանը հրամցնելով գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները: Հայաստանի ազգային և Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարաններն այսօր տեղեկատվական կարևորագույն կենտրոններ են. դրանք բավարարում են ընթերցողի պահանջը ոչ միայն իրենց ունեցած գրքային ֆոնդով, այլև միջգրադարանային բաժնույթի և համակարգչային տեղեկատվական միջոցներով: Եվ եթե երկու գրադարաններն էլ հաշվի առնեն ընթերցողների պահանջները, ժամանակ առ ժամանակ ուսումնասիրեն շուկան, կկարողանան գրավել ավելի մեծ մասնաբաժիններ՝ ոլորտում լինելով առաջատար և պահանջված հանրության կողմից:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով կատարված համեմատական քննությունը՝ հանգել ենք հետևյալ եզրահանգմանը.

Հայաստանի ազգային և Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանների գործունեության արդյունավետության չափորոշիչը ընթերցողների քանակն է: Այն ապահովելու համար անհրաժեշտ է պարզորոշ պատկերացում կազմել, թե ե՞րբ և ի՞նչու է օգտվողը հաճախում գրադարան: Ընթերցողի պահանջները հետազոտելն ու հետևություններ անելն անչափ կարևոր է յուրաքանչյուր գրադարանի համար, իսկ պատկերը կարող ենք ունենալ ճիշտ ընտրված ռազմավարական պլանի առկայության դեպքում: Ռազմավարական պլանի գլխավոր առավելությունը կայանում է նրանում, որ այն հանդիսանում է գործողության ամբողջական և իրավասու դեկլարություն: Այստեղից էլ հետևություն, որ գրադարանային հաստատության մրցունակությունը և առանձնահատկությունները մեծապես կախված են ճիշտ ընտրված ռազմավարական պլանից և գլխավոր նպատակների հասնելու առանձնահատկություններից:

AGHAVNI TADEVOSYAN MARKETING RESEARCH AS A TOOL FOR THE ARMENIAN LIBRARIES (PATRON SURVEY RESULTS)

SUMMARY

Library marketing is a new strategic direction for the Armenian Libraries. Survey results for 2 libraries – the National Library of Armenia and the Yerevan city Municipal library are analyzed.

ԲԱՅՐԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ Ն.

*Եգիպտոսի հայկական թեմական խորհրդի անդամ,
հասարակական գործիչ, «Յուսաբեր» մշակութային ընկերակցության ատենապետ*

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

1891-2016

(ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 125 - ԱՄԵԱԿ)

Բանալի բառեր՝ մամուլ, Եգիպտոս, պատմություն, տպագրություն

Keywords. Press, Egypt, history, printing

Եգիպտահայ ազգային կառույցներու վաստակաշատ եւ արդիւնաւէտ գործունէութիւնը, իր ինքնատիպ դրոշմով, իմաստաւորած է սփիւռքահայ ժամանակակից տարեգրութեան փայլուն էջերը: Արդարեւ, եգիպտահայ մամուլն իր հարիւրյիսունամեայ (1865-2015) վաստակով եւ գրատպութիւնը 1888էն 2015, իր շուրջ երկու հազար հրատարակութիւններով, հայ գրականութեան անդաստանը զարդարած են մտաւորական անկրկնելի սերունդի մը լուսաշող ստեղծագործութիւններով: Հայ մտքի եւ գրչի հանճարը, հայրենիքէն հեռաւոր եւ հիւրընկալ ափերու վրայ, հայ դպրութեան կարօտի շունչով, նպատակասլաց ինքնաբոլի ճառագայթումով, հայահունչ խօսքի երկրպագու նուիրումով, հայատառեր ձուլելով եւ հաւաքելով, մամուլ հրատարակած եւ գրատպութիւն մշակելով հարստացուցած է հայ դպրութեան բազմադարեան գանձարանը: Եգիպտահայութիւնը իր բազմերախտ գաւակներուն նախաձեռնութեամբ եւ տեղական թոյլատրելի պայմաններուն ընդառաջ՝ գիտակցութիւնը ունեցած է իր կարիքներուն պատշաճող կառույցներ յառաջացնելու, ինչպէս նաեւ բարոյանիթական աջակցութիւն կատարող միութիւններ հիմնադրելով՝ սատար հանդիսանալու հայրենի գաւառներու հիմնարկներուն դժուարութիւններու յաղթահարումին:

Այսպէս, ընկերային, մշակութային, խնամատարական, բարեսիրական, հայրենակցական միութիւններ եւ ընկերութիւններ հաստատուեցան, որոնք հայ մշակոյթի մշտավառ բազինը անշեջ պահելու համար կառուցողական ծրագիրներ, գործունէութիւն եւ տեսլական մշակելով՝ սերունդներու համախմբումը ապահովեցին եւ դաստիարակելու հայաշունչ միջավայրեր ստեղծեցին:

20րդ դարասկիզբին, ազգային կառույցներու վարչութիւններու ծրագրուած գործունէութեան մէջ եւ զուգահեռ, նկատառելի քաջալերուած երեւոյթ դարձած էր միութենական գրադարաններու հաստատումը, միութեան հաւաքավայրը յաճախող գրասէր հայորդիներուն տրամադրութեան տակ դնելու համար զարթօնքի սերունդի մտաւորականութեան հայրենաշունչ ստեղծագործութիւններու հատորները եւ երկիրէն եկած մամուլի հրատարակութիւնները:

Հետզհետեւ հաստատուող կրթական յարկերը եւ գաղթականութեան ճամբով մտաւորականներու եւ դաստիարակ մշակներու հոսքը դէպի Եգիպտոս մեծապէս սատարեցին ընթերցասիրութեան զարգացումին եւ, հետեւաբար, բազմաբնոյթ պարբերականներու լոյս ընծայումին եւ գրահրատարակութեան զգալի պահանջին:

Պարբերական մամուլի էջերով ընթերցողին հրամցուող թերթօնները, համաշխարհային գրականութենէն պրակ առ պրակ թարգմանաբար լոյս տեսնող վէպերը եւ մատենաշարային հրատարակութիւնները եւս խթանեցին անձնական գրադարաններու կազմութեան նախաձեռնութիւնը:

Ժամանակները եկան սակայն տարբեր եւ անսպասելի ճակատագրի արժանացնել հարուստ պատմական անցեալ ունեցող կենսուրախ եւ շէնշող եգիպտահայ գաղութը:

Առաջին առթիւ, երկրորդ աշխարհամարտի տարիներուն յառաջացած տպագրութեան ասպարէզի կարիքներուն սղաճը յաւելեալ դժուարութիւններու առջեւ դրաւ հրատարակիչներուն արդէն դիմակալած նիւթական պարտաւորութիւնները:

1940ականներու երկրորդ կիսուն դէպի հայրենիք կատարուած ներգաղթը իր հետ տարաւ եգիպտահայ բազմաթիւ միութիւններու վարչականները, մամուլի եւ տպագրական կառոյցներու խմբագիրներ եւ գրաշարական կազմերու նուիրեալ գործիչները:

Ափսոսանքով արձանագրելի է նաեւ, շրջանային եւ տեղական քաղաքական իրադարձութիւններու հետեւանքով յառաջացած Եգիպտոսէն արտագաղթի երեւոյթը, որ իր հետ տարաւ ղեկավարութիւն ստանձնելու համար պատրաստուած նորահաս սերունդը՝ անկանխատեսելի ցնցումներու ենթարկելով բազմաթիւ եգիպտահայ գործօն կազմակերպութիւններ:

Այսպէսով, հրատարակութիւններու եւ գրատպութեան գործընթացը անկուով կրելով՝ կարգ մը թերթեր եւ հանդէսներ ընթացիկ պարբերականութեան փոփոխութեան ենթարկուեցան կամ դադրեցան, իսկ արտագաղթողներու անձնական գրահաւաքածոներ տարտղնուելով գրավաճառներու քմահաճոյք տրամադրութեան յանձնուեցան: Եգիպտահայ ազգային կառոյցներու գործունէութեան մասին նախաձեռնուած մատենագիտական պրպտումներու ընթացքին, զանազան կազմակերպութիւններու գրադարաններուն հաստատումին ժամանակագրական ցուցակի մը պատրաստութիւնը կատարելով, ի յայտ եկան շուրջ երեսուն գրական հաւաքածոներով օժտուած եւ ընթերցարան հաւաքատեղիներ ունեցող միութիւններ: Ստորեւ, Եգիպտոսի մէջ վերջին 125 տարիներու ընթացքին գոյառած, գործած, զանազան պատճառներով կազմալուծուած եւ վերջապէս ներկայի գաղութահայ պայմաններով ինքնամեկուսացած գրադարաններու մասին ձեռքբերուած ամփոփ տուեալներ:

1. «ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆ - ԳԱՀԻՐԷ , 1891-1899

Ընկերությունը հիմնուած է 1891ին խումբ մը ընթերցասէր եւ մշակութասէր երիտասարդներու նախաձեռնութեամբ՝ նպատակ ունենալով «Գահիրէի հայութեան շրջանում սէր ու հետաքրքրութիւն արծարծել դէպի հայոց մշակոյթը»¹:

1895ին ընկերութիւնը հաստատած է «Հայ ակումբ» անունով իր ընթերցասրահը, որուն բացումը կատարուած է 19 Յունուար 1896ին:

Հաստատուած է Ընկերութեան գրադարանը՝ ճոխացած հայերէն եւ օտարալեզու գրականութեան հատորներով եւ ստացուած պարբերականներու հաւաքածոյով:

Պայմաններու հարկադրանքին տակ Ընկերութիւնը փակուած է 1899ին՝ միանալով նոյն տարին հիմնուած Լսարան-Ընթերցատուն Ընկերութեան²:

2. «ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆ - ԳԱՀԻՐԷ , 1899-1912

Լսարան Ընկերութիւնը հիմնուած է Յուլիս 1899ին՝ իր մէջ լուծարելով «Ընթերցասիրաց Ընկերութիւն»ը եւ ընդունելով անոր գրադարանի 2000 ոսկի արժող հայերէն եւ այլ լեզուներով գիրքերու հաւաքածոն³: Ընկերութեան հիմնադիրներէն եղած է Գեորգ Ակոբովիչը⁴:

Հիմնական եւ ներքին կանոնադրին կազմութիւնը կատարած են Հ. Ս. Զատեան, Ե. Գարագաշ, Ռ. Նազար, Կ. Երզնկացեան եւ Ս. Զոլաքեան:

Ընկերութեան բացումը կատարուած է Կիրակի 21 Յունուար 1900ին, Պազար Սուրուրի մէջ:

Պէյն Էլ Սուրէյնի ֆրէրներու վարժարանին կից շէնքին մէջ փոխադրուելով՝ գրադարանը վերաբացուած է Կիրակի 9 Յունիս 1901ին⁵:

1903ի Վարչութեան անդամ եղած են Ա. Հանըմեան (ատենապետ), Տ. Հաճընեան (Փոխ-ատենապետ), Ե. Տէմիրճեան (քարտուղար), Տ. Պէյլերեան (փոխ-քարտուղար), Ս. Օտապաշեան (գանձապետ), Վ. Ճիզմէճեան (հաշուապահ) եւ Գ. Պահլաւ (խորհրդական)⁶:

Ընթերցասրահը 1906ին փոխադրուած է Գահիրէի Թէվֆիքիյէ թաղին սեփական ակումբը, եւ հասարակութեանը ծառայած մինչեւ 1912:

3. «ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ»-ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ , 1899-1908 (ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ)

¹ Ուսումնարան տարեգիրք, Գ.տարի, Գահիրէ, 1959-1960, էջ 18:

² «Արշալոյս» լրագիր, Գահիրէ, 1899, թ.23:

³ Ուսումնարան տարեգիրք, Գ.տարի, Գահիրէ, 1959-1960, էջ 18:

⁴ Գարտաշեան Արտաշէս Հ., Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան համար, հտ. Բ., Վենետիկ, 1982, էջ 309:

⁵ «Արշալոյս» լրագիր, Գահիրէ, 1901, թ. 184:

⁶ «Ազատ բեմ» լրագիր, Աղեքսանդրիա, 1903, թ. 129:

Մատենադարանի Ընկերությունը հիմնուած է բացման ձեռնարկը կատարուած է սեպտեմբեր 1899ին՝ հաստատուելով Մօսֆերաթոյի շէնքին առաջին յարկին մէջ (նախկին իտալական քիւլպին տեղը):

Վարչական պատասխանատուները եղած են Յ. Ա. Գալֆայեան (ատենապետ) եւ Ա. Նազճեան (ատենադպիր):

Գրադարանին հաւաքածոյին մաս կազմած են հայերէն եւ օտար լեզուներով գիտական եւ մշակութային բնոյթի հրատարակութիւններ եւ մեծ թիւով պարբերականներ եւ հանդէսներ:

Գրադարանէն օգտուողներուն մեծամասնութիւնը եղած են Եգիպտոս ապաստանած գաղթականներ եւ մշակութային գործիչներ:

Տեղւոյն սկզբունքին համաձայն՝ գիրքերը արտաքին ընթերցանութեան տրամադրուած են չնչին վարձով, իսկ պարբերականները՝ միայն տեղական իրազեկութեան:

Հետագային Ընկերութիւնը անուանուած է «Ժողովրդական Գրադարան-Ընթերցարան Ընկերութիւն»⁷, իսկ 1 Ապրիլ 1900ին կոչուած է «Աղեքսանդրիոյ Ժողովրդային Մատենադարան Լսարան» հաստատութիւն⁸:

Գաղթականներուն իրենց տուները վերադարձով՝ Ընկերութիւնը կազմալուծուած է 1908-ին⁹:

4. «ՀԱՅ ՊԱՏԱՆԵԱՅ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ»

ԳՐԱԴԱՐԱՆ-ԳԱՀԻՐԷ, 1905-1907

Գրադարանը հաստատուած է Ապրիլ 1905ին, Ուսումնասիրաց Ընկերութեան կեդրոնին մէջ՝ ունենալով ընթերցասէր հասարակութեան տրամադրելի հայերէն գիրքերու, տեղական եւ արտասահմանեան թերթ-հանդէսներու ճոխ հաւաքածոյ մը¹⁰:

Միութեան վարչութեան մաս կազմած են Կ. Փափագեան, Մ. Սեթիկեան, Ն. Կարապետեան, Ա. Եագուպեան, Տ. Թովալեան եւ Թ. Պասմաճեան¹¹:

1906ին հրատարակուած է վաւերացուած «Կանոնագիր Մեսրոպեան Ուսումնասիրաց Ընկերութեան» պրակը (տպ. Լուսաբեր)¹²:

1907էն գրադարանը մաս կազմած է նորակազմ «Վասպուրական Ընթերցասիրաց Ընկերութեան»¹³:

5. «ԱՐԱԲԿԻՐԻ ՀԱՅՈՑ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ» ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ-ԳԱՀԻՐԷ, 1908

⁷ «Արշալոյս» լրագիր, Գահիրէ, 1899, թ. 20:

⁸ Նոյնը, 1900-1901, թ. 76, 156:

⁹ Թովուգեան Յովհ.: Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952), Երեւան, 1978, էջ 195:

¹⁰ «Ազատ բեմ» լրագիր, Աղեքսանդրիա, 1906, թ.46:

¹¹ Նոյնը, 1907, թ.28:

¹² Թեոդիկ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 189:

¹³ Թովուգեան Յովհ., Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952), Երեւան, 1978, էջ 193:

Արաբկիրի Կրթասիրաց Ընկերության «Գրադարան-Ընթերցարան»ը կազմակերպում է 1908ին՝ ունենալով շուրջ 200 անուն հայերէն գիրքեր¹⁴:

Գրադարանը սփիւռքահայ մամուլէն պարբերաբար ստացած է աւելի քան 10 հայ պարբերականներ¹⁵:

6. Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ - ԳԱՀԻՐԷ, 1910

«ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ» ԳՐԱԴԱՐԱՆ - ԳԱՀԻՐԷ - 1958, 2003

Հ.Բ.Ը.Միութեան գրադարանը կազմակերպած է գրադարանապետութիւնը ստանձնած է Կարապետ Պէյ Շիրիտճեան 1910-1912: 1927-ին գրադարանը հարստացած է Եագուպ Արթին Փաշայի անձնական գրադարանի հաւաքածոյով:

Գրադարանը 1956-ին դասաւորած է ծանօթ գրադարանավար բանասէր Արտաշէս Գարտաշեանը¹⁶:

Հետագային՝ 1958-ին, գրադարանը հաստատուած է Հ.Բ.Ը.Միութեան Գահիրէի գրասենեակին մէջ՝ անուանուելով «Եագուպ Արթին» գրադարան՝ ի յիշատակ Միութեան հիմնադիրներէն, անոր փոխ-նախագահ եւ Եգիպտոսի նախկին կրթական նախարար Եագուպ Արթին Փաշային:

Գրադարանը հարստացած է պատմական, գեղարուեստական, գրական, կրօնական եւ բանասիրական, նաեւ հայաստանեան հրատարակութիւններու հարուստ հաւաքածոյով, տարիներու ընթացքին ազգայիններու, հիմնարկներու եւ արտագաղթող ընտանիքներու կողմէ տրամադրուած:

2003ին գրադարանը փոխադրուած է Հ.Բ.Ը.Միութեան Հելիոպոլսոյ «Սաթենիկ Չագըր» նորահաստատ կէդրոնը: 2010ի սկիզբը Եգիպտահայ բանասէր Տիգրան Գեորգեան իր անձնական գրադարանը նուիրած է Հելիոպոլսոյ Հ.Բ.Ը. Միութեան գրադարանին:

7. «ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ» ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ – ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, 1910

Գրադարանն իր երեք հարիւր հատորներով հաստատուած է 1910ին վերակազմուած Հայ Երիտասարդաց Միութեան Նուպար Փաշա փողոցի յարկաբաժնին մէջ¹⁷:

1924ին գրադարանին գիրքերուն թիւը կը հասնի 1650ի, որոնց կողքին նուէր ստացուած է 300 օտարալեզու հատորներ, հայ եւ օտար 25 թերթերու հաւաքածոներ¹⁸:

¹⁴ «Արշալոյս» լրագիր, Գահիրէ, 1910 18 Յուլիս:

¹⁵ Թովուգեան Յովհ., Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952), Երեւան, 1978, էջ 192:

¹⁶ Գարտաշեան Արտաշէս Հ., Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար, Հատոր Բ, Վենետիկ, 1982, էջ 249, 289:

¹⁷ Յուշմատեան «Տիգրան Երկաթ» Հայ Մշակութային Միութեան Հիմնադրութեան 100-ամեակի Յօրէկեանին 1902 – 2002, Աղեքսանդրիա, Գահիրէ, 2003, էջ 5:

¹⁸ «Արեւ» օրաթերթ, Գահիրէ, 1934, 24 Հոկտ., էջ Բ:

8. «ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆ -ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ , 1910-1914, 1917

Գրադարանը հիմնուած է 1910ի վերջերը՝ հաստատուելով «Աղեքսանդրիահայ Ընթերցասրահ»ին մէջ իր այլազան նիւթերու հարուստ հաւաքածոյով¹⁹:

Կազմալոյծ եղած է 1914ին, սակայն հետագային վերակազմուած եւ գործած է 1917 թուականին²⁰:

Գրադարանին մաս կազմած են գրական, գիտական, բանասիրական, պատմական, ու վիպական 1200 հատորներ, եգիպտահայ եւ սփիւռքահայ թերթերու հաւաքածոներ, օտարալեզու պարբերականներ²¹:

Գրադարանէն կրցած են ձրի օգտուիլ Միութեան անդամները, իսկ ոչ-անդամները՝ 2 դր2. ամսավճարով²²:

9. «ԱԶԳԱՅԻՆ ՍՐԱՀ» ԳՐԱԴԱՐԱՆ - ԳԱՀԻՐԷ, 1913

«Ազգային Սրահ»ին նախաձեռնող հիմնադիրը եղած է Պետրոս Յովսէփեան: Սրահը ունեցած է «Կանոնագիր Հայ Ազգային Սրահ Հաստատութեան ի Գահիրէ - Ներքին Կանոնագրութիւն Հայ Ազգային Սրահի», (Տպ. Զ. Ն. Պէրպլէեան, Գահիրէ, 22 էջ, 1913)²³:

Վարչութեան գործունէութեան մաս կազմած է գրադարանի մը հաստատումը եւ նախաձեռնած գրահաւաքի արշաւի²⁴:

Կիրակի 2 Մարտ 1918ին վերանուանուած «Հայկական Սրահ»ի ընդհանուր ժողովը ընտրած է նոր վարչութիւն մը դիւանի անդամակցութեամբ՝ Միհրան Ղազարոսեանի (ատենապետ), Արշակ Ֆերմանեանի (փոխ-ատենապետ), Երուանդ Օգոստինոսեանի (ատենադպիր) եւ Պետրոս Սէլեանի (գանձապահ)²⁵:

Սրահին գրադարանը վերակազմակերպած եւ գրադարանավարութիւնը ստանձնած է Գէորգ Նահապետեան²⁶:

10. ՄԱՆԻՍԱԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ - ԳԱՀԻՐԷ, 1913 – 1947

Վարժարանին աշակերտութեան մշակութային գործունէութեան մաս կազմած է գրադարանի մը հաստատումը, որ իրականացած է 1913ին հիմնուած «Նախկին Սանուց Միութեան» նախաձեռնութեամբ, եւ ընդլայնուած՝ ընթերցասէր սաներուն եւ դաստիարակներու ճիգերուն շնորհիւ²⁷:

¹⁹ Ուսումնարան տարեգիրք, Դ.տարի, Գահիրէ, 1962, էջ 133:

²⁰ «Յուսաբեր» երկօրեայ, 1914, թ. 182:

²¹ Նոյնը, 1918, թ. 6:

²² «Արաքս» լրագիր, 1917, Հոկտ., էջ Դ:

²³ Պայրամեան Սուրէն, Հայ գիրքը Եգիպտոսի մէջ 1888-2011, Գահիրէ, 2012, թ. 141:

²⁴ «Յուսաբեր» երկօրեայ, 1913, թ. 66-70, 75:

²⁵ Նոյնը, 1914, թ. 218:

²⁶ Նոյնը, 1918, թ. 149:

²⁷ Յայտագիր-Օրագիր: Մանիսալեան Երկրորդական Վարժարան, Վենետիկ, 1928, էջ 51:

1947ին վարժարանին փակումէն ետք գրադարանին հատորները յանձնուած են Գահիրէի Ազգային Առաջնորդարանին²⁸:

11. «ՅԱՌԱՋԴԻՄԱՍԷՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ - ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, 1917

Մշակութային Միութեան նորակազմ վարչութեան նախաձեռնութեամբ գրադարանը հաստատուած է 1917ին: Գրադարանի հաւաքածոյին մաս կազմած են առաջին առթիւ ստացուած 500է աւելի հայերէն և 200ի չափ օտար լեզուներով հատորներ: Գրադարանէն օգտուելու պայմաններ նկատի առնուած են հետեւեալ սկզբունքները.

Ա. Գիրք առնելու համար ամէն օր ժամը 7-8 (կ. ե.), իսկ Կիրակի օրերը՝ ժամը 11-12 (կ. ա.)

Բ. Միայն Ընկերակցութեան անդամները իրաւունք ունին օգտուելու մատենադարանէն և մէկ հատորէ աւելի կարելի չէ միաժամանակ առնել, նաեւ՝ ընթերցողները առ առաւելն երկու շաբաթ կրնան հատոր մը իրենց քով պահել²⁹:

12. «ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ»Ի ԳՐԱԴԱՐԱՆ - ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, 1919

Վարժարանին մէջ գոյութիւն ունեցող հատորներու անկազմակերպ հաւաքածոն իբրեւ գրադարան կազմակերպուելու ընթացքի մէջ մտած է 1919-ին՝ Տիգրան Կամսարականի քաջալերութեամբ եւ իր կողմէ նուիրուած հատորներով:

1924-ին Գեորգ Իփեքեան 35 Եգ. ոսկի նուիրած է՝ վարժարանին գրադարանը աշակերտութեան համար հայագիտական նիւթերու գիրքերով օժտելու դիտաւորութեամբ: Նոյն նպատակին 1925-ին Գրիգոր Սարգիսեան 20 Եգ. ոսկի նուիրած է, իսկ զանազան ազգայիններ մեծ թիւով հատորներով օժտած են գրադարանը:

Տիկին Զարուհի Ճերմակեան վարժարանին նուիրած է նախկին տնօրէն Յակոբ Աղասերի եւ Հրաչեայ Փէրիզեանի գիրքերը:

1939-ին Հերմինէ Մարգարանեան նուիրած է 350 զանազան հատոր:

Վարժարանին գրադարանը վերակազմակերպուած է 1949-1950 շրջանին:

Ուսուցչուհի Օր. Սրբուհի Սարգիսեան գրադարանավարութիւնը կատարած է 1950-ական տարիներուն, իսկ Օր. Ա. Մանճըլըզեան գիրքերու դասաւորումը ստանձնած 1963-1964 տարեշրջանէն սկսեալ³⁰:

13. «ԱՐԱՐԱՏ» ԳՐԱԴԱՐԱՆ - Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՍՐԱՀ – ԳԱՀԻՐԷ, 1919

²⁸ Յօդուէրական յուշարձան: Մանիսալեան Վարժարանի Գահիրէ, Վենետիկ, 1931, էջ 32:

²⁹ «Յառաջդիմասէր» ամս. Տեղեկաբեր, Աղեքսանդրիա, 1917-1918, թ. 1, Նոյ.:

³⁰ Գարտաշեան Արտաշէս Հ., Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար, հտ. Գ., Վենետիկ, 1982, էջ 120, 121:

Գրադարանը հաստատուած է Հայկական Ընթերցասրահէն ներս, աւելի քան 1000 հատորներու հաւաքածոյով, որուն ընթերցասէրներ ընդունելու օրերը եղած են ամէն Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերը, երեկոյեան ժամը 7էն 8³¹:

14. «ԱՐԱԾԱՆԻ» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ-ԳԱՀԻՐԷ, 1926

Միութիւնը հիմնուած է 1926ին, որուն հիմնադիր անդամներէն եղած են Յակոբ Արամեան, Արշամ Տատրեան եւ Արտաշէս Գարտաշեան³²: Վարչութեան նախաձեռնութեամբ գրադարանը հաստատուած է Միութեան կեդրոնատեղիին մէջ 1926-ին³³:

Տեղւոյն գրադարանը կազմակերպած է Արտաշէս Գարտաշեան եւ անոր Պատուակալ Գրադարանապետութիւնը ստանձնած 1934-1935 երկամեակին³⁴:

15. «ԱՂՄԱՄԵԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆ - ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ - ԳԱՀԻՐԷ, 1929

Գալուստեան Ազգային Վարժարանի գրադարանը հաստատուած է 1929ին՝ նախաձեռնութեամբ 1928ին հիմնուած «Աշակերտական Միութեան» եւ իրագործումովը անոր սկզբունքային նպատակին: Հետագային, գրադարանը ճոխացած է զանազան ազգայիններու կողմէ նուիրուած հատորներով:

Առաջին առթիւ, Մայիս 1929ին Յովհաննէս Աղմամեան (վանեցի) 700 հատոր գիրքեր նուիրած է վարժարանին: Նոյն տարւոյն Դեկտեմբերին, վարժարանին տնօրէն Լեւոն Թաշճեան գրադարանին բացումը կատարելով՝ զայն անուանուած է «Աղմամեան Գրադարան»: Տիկ. Նուարդ Շաղոյեան-Ճիվելիքեան (դուստրը վանեցի Աւետիս քինյ. Շաղոյեանի - 1855-1919) իր հօր 180 գիրքերը նուիրած է գրադարանին, իսկ Պալըզճեան եղբայրներ իրենց ծնողաց յիշատակին ընտանեկան գրադարանը նուիրած են վարժարանին:

1937ին ընտրուած վարչութիւնը նախաձեռնած է վարժարանին գրադարանին վերակազմութեան, մամուլի էջերով գրահաւաքի կոչով, պատասխանատուութեամբ՝ Օննիկ Ալեքսանեանի³⁵:

1959-ին Վարժարանին կահոյքը եւ գրադարանը նորոգուած են Ֆէնէսէի Ռուբինեան եւ Էվերէկի Մեսրոպեան Կրթասիրաց Միութիւններու եւ Տիար Թորոս Խաչատուրեանի նուիրատուութիւններով:

Գրադարանին գիրքերու հաւաքածոն հաշուած է շուրջ 5000 հատոր³⁶:

16. «ՆՈՒՊԱՐԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ»Ի ԳՐԱԴԱՐԱՆ - ՀԵԼԻՈՊՈԼԻՍ, 1930

³¹ «Զարթօնք» լրագիր, Գահիրէ, 1919, թ. 5:

³² Եւփուճեան Աւետիս, Եգիպտահայ մշակոյթի պատմութիւն, Գահիրէ, 1981, էջ 157:

³³ «Զահակիր» շաբաթաթերթ, 1956, թ. 75-76:

³⁴ Գարտաշեան Արտաշէս Հ., Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար, հտ. Բ, Վենետիկ, 1982, էջ 758:

³⁵ Գարտաշեան Արտաշէս Հ., Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար, հտ. Բ., Վենետիկ, 1982, էջ 564:

³⁶ Յուշամատեն Գալուստեան Ազգային Վարժարան 1854 – 2004, Գահիրէ, 2004, էջ 38:

Կարժարանին գրադարանը հաստատուած է 1930ին եւ ճոխացած Տիկին Է. Փափագեանի նուիրած Մէթր Սմբատ Փափագեանի անձնական գրադարանի հատորներով, նաեւ Ա. և Ս. Նետուրեաններու եւ ուրիշներու տրամադրած գիրքերով:

Գրադարանը կազմակերպուած է դասաւորուած է 1950-1954ին՝ հոգաճութեամբ ուսուցչուհի Արմինէ Սրէնճեանի³⁷:

17. «ՀԱՅՐ ԱԼԻՇԱՆ» ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ – ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, 1931

Կաթողիկէ Երիտասարդաց Միութեան գրադարանին բացումը կատարուած է 19 Ապրիլ 1931ին, նախագահութեամբ Եպիսկ. Փոխանորդ Գերշ. Յովսէփ Ծ. Վ. Քաջունի³⁸:

Գրադարանին հասցէն եղած է թիւ 18, Անսիէն Պուրս փողոց, Աղեքսանդրիա³⁹:

18. «ԱՊՐԻԼԵԱՆ ՍԵՐՈՒՆԴ» ՄԻՈՒԹԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ–ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, 1932- 1939

Գրադարանը հաստատուած է 1932ին կազմուած «Ապրիլեան Սերունդ» Միութեան վարչութեան նախաձեռնութեամբ⁴⁰:

Ունեցած է ընթերցասէր երիտասարդներէ կազմուած յանձնախումբ մը, որուն գրահաւաքի ճիգերով եւ զանազան ազգայիններու կողմէ տրամադրուած բազմա-հարիւր հատորներով օժտած է գրադարանը:

Գրադարանին գիրքերու հաւաքածոն հետագային փոխանցուած է «Շաւարշան» Միութեան 1939ին⁴¹:

19. «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ – ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, 1937

Միութեան նորակազմ «Գրական յանձնախումբ»ին նախաձեռնութեամբ «Հայ Երիտասարդաց Միութեան Գրադարան»ը հաստատուած է 1937ին:

Երիտասարդաց Միութեան հաւաքավայրին հասցէն եղած է Աղեքսանդրիոյ Սալահ Էլ Տին թաղաշրջանին թիւ 16, Ֆաքիի փողոց⁴²:

Գրադարանը հարստացած է համայնքին գրասէր ազգայիններուն յղուած կոչին ընդառաջ ստացուած այլազան բնոյթի հատորներով եւ մամուլի տեղական ու արտասահմանեան հրատարակութիւններով:

20. «ՇԱԽԱՐՇԱՆ» ՄԻՈՒԹԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ - ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, 1939

³⁷ Գարուշեան Արտաշէս Հ., Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար, հտ. Գ., Վենետիկ, 1982, էջ 248:

³⁸ «Արեւ» օրաթերթ, Գահիրէ, 1931, Ապրիլ:

³⁹ Գարուշեան Արտաշէս Հ., Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար, հտ. Գ., Վենետիկ, 1982, էջ 329:

⁴⁰ Ուսումնարան տարեգիրք, Դ.տարի, Գահիրէ, 1962, էջ 134:

⁴¹ «Զարթօնք» 1939, պրակ Ա., թ. 1:

⁴² Գարուշեան Արտաշէս Հ., Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար, հտ. Գ., Վենետիկ, 1982, էջ 466:

Գրադարանը կազմուած է 1939ին, Աղեքսանդրիոյ «Ապրիլեան Սերունդ» եւ «Վերածնունդ» միութիւններուն միաձուլումով եւ հաստատուած «Վերածնունդ»ի կեդրոնին ժողովասրահի կողքին⁴³:

21. «ԹՈՐԳՈՄԵԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ-ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ-ԳԱՀԻՐԷ, 1939

Գրադարանին մաս կազմող հիմնական 150 գիրքերը 1864ին Ս. Աստուածածին եկեղեցիին եւ անոր կից Խորէնեան Վարժարանին նուիրուած հատորներն են այդ օրերու եգիպտահայոց Առաջնորդ Գաբրիէլ Եպս. Մարաշցիի կողմէ:

Գիրքերու սոյն հաւաքածոն ժամանակի ընթացքին ունեցած յաւելումներով 1929ին փոխադրուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շրջաքակին մէջ կառուցուած Ազգային Առաջնորդարան:

Գրադարանը վերակազմակերպուած է 1930ական թուականներուն Առաջնորդ Թորգոմ Արքեպս. Գուշակեանի նախաձեռնութեամբ, որուն վախճանումէն ետք եւ յիշատակին՝ Գահիրէի Թեմական Ժողովի որոշումով 1939ին կոչուած է «Թորգոմեան Ազգային Մատենադարան»:

Տասնամեայ տեւողութեամբ, գրապահոցը կառավարուած է յանձնախումբերու կողմէ եւ 1947էն 1953՝ անուշադիր պայմաններու մէջ մնացած:

1954ին Պատուարժան Քաղաքական Ժողովը ընդառաջած է բանասէր Արտաշէս Գարտաշեանի առաջարկին՝ անոր վստահելով գրադարանին վերակազմակերպումը Առաջնորդարանի գետնայարկի սենեակին մէջ⁴⁴:

Ա. Գարտաշեան, գրադարանավարութիւնը կատարած է մինչեւ Եգիպտոսէն իր մեկնումը 1965ին⁴⁵:

Գրադարանին, շուրջ տասը հազար հայատառ եւ օտարալեզու, ինչպէս նաեւ հնատիպ հատորներուն կողքին կը գտնուին եգիպտահայ եւ սփիռքահայ մամուլէն օրաթերթերու եւ պարբերականներու կազմուած հաւաքածոներ:

2006ին, Գահիրէի Պատուարժան Քաղաքական Ժողովի որոշումով գրադարանը փոխադրուած եւ հաստատուած է Գահիրէի Առաջնորդարանին կից գտնուող նախկին «Աբգարեան» դարմանատան շէնքին մէջ եւ հատորներու վերադասաւորումը կատարուած է Քաղաքական Ժողովի հրաւերով՝ Հայաստանի Ազգային գրադարանի տնօրէնութեան կողմէ գործուողուած երկու մասնագէտ գրադարանավար աշխատակցուհիներու կողմէ:

22. «ՏԱՄԱՏԵԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ - 1942

Ռ.Ա.Կ.Ի «ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ» ԱԿՈՒՄԲ - ԳԱՀԻՐԷ, 1956

⁴³ «Զարթօնք», 1939, պրակ Ա., թ. 1:

⁴⁴ Եափուճեան Աւետիս, Եգիպտահայ Մշակոյթի Պատմութիւն, Գահիրէ, 1981, էջ 157:

⁴⁵ Գէորգեան Կարօ, Ամենուն տարեգիրքը, Պէյրութ, 1956, Գ.տարի, էջ 367:

Մատենադարանը հաստատուած է Գահիրէի Ռամկավար Ակումբին կողմէ տրամադրուած 250 հատորներով, որոնք հետագային հասած են 2500ի⁴⁶: Բացումը կատարուած է «Հայ Գեղարուեստասիրաց Միութեան» սրահին մէջ, Կիրակի 20 Դեկտեմբեր 1942ին, նախագահութեամբ Վահան Թէքէեանի⁴⁷:

Մատենադարանը «Հայտուն» փոխադրուելէ ետք վերաբացուած է 22 Դեկտեմբեր 1956ին: Կահաւորման ծախսը հոգացած է Տիկ. Բ. Մարգարեան՝ իր վաղամեռ որդւոյն՝ Նուպար Մարգարեանի յիշատակին, իսկ վերադասաւորումը եւ ցանկագրումը կատարուած է Արտաշէս Գարտաշեանի հսկողութեամբ⁴⁸:

Գրադարանավարներ եղած են Արամ Ալեանաքեան, Կարպիս Գմգմեան, Սահակ Թիւրապեան, Վահան Խէրպէկեան, Առաքել Պատրիկ, Հերմինէ Սիմոնօֆ եւ Ալիս Տեփոյեան⁴⁹:

23. «ՍԵՒԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ - ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, 1943-1947

«Սեւան» Միութիւնը հիմնադրուած է 1943ին Գառնիկ Սվազեանի ջանքերով՝ հաստատուելով լուծարուած Հ.Օ.Կ.ի հաւաքավայրին մէջ⁵⁰:

Հ.Օ.Կ.ի գրադարանը եւս փոխանցուած է նորակազմ «Սեւան» մշակութային միութեան, որուն վարչութեան ջանքերով ճոխացած է անոր հայերէն եւ օտար լեզուներով հատորներու հաւաքածոն⁵¹:

Միութեան նպատակը եղած է *«մշակութասէր երիտասարդներու քաջալերութիւնը եւ հայրենիքի առաջընթացին ծանօթացումը»*:

Գրադարանը փակուած է 1947ին՝ անոր հիմնադիրին եւ վարչական պատասխանատուներուն հայրենադարձութեամբ:

24. ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ - ԳԱՀԻՐԷ, 1944

Գրադարանը հաստատուած է Գահիրէի կեդրոնական թաղաշրջանին մէջ Կարապետ պէյ Մաթոսեանի բարերարութեամբ եւ Կարօ Պալեանի ճարտարապետութեամբ՝ 1926ին կառուցուած Աւետումն Սուրբ Կոյս Մարիամի հայ կաթողիկէ տաճարին կողքի Պատրիարքարանին երրորդ յարկին վրայ:

1980ականներու սկիզբը գրադարանը վերակազմուած է արեւելագէտ Հայր Վենսան Մուսթարիի հայագէտ Ֆրանչիսկեան Վարդապետի հոգածութեամբ⁵²:

⁴⁶ Յիշատակարան Ալպոմ- Հայ Գեղարուեստասիրաց Միութիւն, 35ամեակ(1920-1955), Գահիրէ, էջ 39:

⁴⁷ «Գրասէրի Առաջնորդ» պրակ Դ., 1943:

⁴⁸ Գարտաշեան Արտաշէս Հ., Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար, հտ. Բ., Վենետիկ, 1982, էջ 758:

⁴⁹ Եափուճեան Աւետիս, Հայ Գեղարուեստասիրաց Միութեան Պատմութիւն, Գահիրէ, 2004, էջ 47, 276:

⁵⁰ Թոփուզեան Յովհ., Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952), Երևան, 1978, էջ 192:

⁵¹ Եափուճեան Աւետիս, Եգիպտոսի Մշակոյթի Պատմութիւն, Գահիրէ, 1981, էջ 157:

⁵² Գեորգեան Տիգրան, Եգիպտոսի Հայ Կաթողիկէ Համայնքը, Գահիրէ, 2001, էջ 10, 28:

25. «ՓԱԼԱՆՃԵԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ - ԳԱՀԻՐԷ, 1952

Հաստատուած է «Յուսաբեր»ի Տան մէջ 1952-ին եւ անուանուած «Համազգային Հայ Կրթական եւ Հրատարակչական Ընկերութեան» բարերար Նշան Փալանճեանի յիշատակին:

Երկյարկանի մատենադարանին ապակեպատ ցուցաբեկերուն մէջ դասաւորուած են երկու տասնեակ հազար հաշուող բազմաբնոյթ բովանդակութեամբ հատորներ՝ նուէր ստացուած Հ.Յ.Դ. աշխարհասփիւռ կառոյցներէ, հրատարակչատուներէ, ինչպէս նաեւ անհատներէ:

1950ականներու աւարտին մատենադարանը հարստացած է Վահան Նաւասարդեանի եւ Գաբրիէլ Լազեանի անձնական գրադարաններուն հատորներով:

Անձնական գրադարաններու հաւաքածոները ստացուած են նաեւ 1960ականներուն արտագաղթող հայորդիներէ:

Գոյութիւն ունին «Յուսաբեր» օրաթերթի ամբողջական հաւաքածոն, ինչպէս նաեւ եգիպտահայ ու սփիւռքի հայկական մամուլէն զանազան տարիներու հաւաքածոներ:

Երկար տարիներ մատենադարանին վարիչը եղած է Բաբկէն Թիրեաքեան՝ որդին գաղափարական մեծանուն գործիչ Հրաչ Թիրեաքեանի:

Մատենադարանը 1980ական թուականներուն վերադասաւորուած է Հ.Յ.Դ. Երիտասարդաց Միութեան «Գրական Յանձնախումբ»ին անդամներուն նախաձեռնութեամբ եւ ուշադրութեան առարկան դարձած ընթերցասէր նոր սերնդականներուն:

26. «Հ.Յ.Դ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆ - ԳԱՀԻՐԷ 1955, ՀԵԼԻՈՊՈԼԻՍ 1955

Հաստատուած է 1955ին «Յուսաբեր» Տան երրորդ յարկի «Դալար Տանիք»ին կից Երիտասարդաց հաւաքավայր-ժողովասրահին մէջ՝ իր հարուստ 1700 հատորներու հաւաքածոյով:

Երիտասարդաց Միութեան Շրջանային Վարչութեան կողմէ նշանակուած Յանձնախումբը ստանձնած է գրադարանին կազմակերպումը եւ ղեկավարութիւնը:

Հետագային՝ 1960ականներու առաջին կիսուն, «Երիտասարդաց Գրադարան» մը ևս հաստատուած է Հելիոպոլսոյ Յուսաբեր Ակումբին Հ.Մ.Ը.Մ.Արարատի Ա. Մէօթէմէտեան հաւաքավայրէն ներս:

27. «ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԱՐԱՅԵԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆ - ՀԵԼԻՈՊՈԼԻՍ, 1965, 1971

1965ին Հ.Ա.Հիմնադրամի վարչութեան որոշումով նախաձեռնուած է Կոկանեան Սրահի աջակողմեան մասը օգտագործելու ծրագրին իրագործումին գրադարանի մը եւ փոքր սրահի մը կառուցումով:

Շինութեան աշխատանքը կարճ ժամանակի ընթացքին աւարտելով՝ գրադարանը գործածութեան յանձնուած է նոյն տարեվերջին:

1969ին գրադարանին կահաւորումը կատարուած է Տէր եւ Տիկին Թագուր Պարծանքեաններու օժանդակութեամբ, եւ որոշուած գրադարանը անուանել հանգուցեալ Համբարձում Գարայեանի յիշատակին:

Հելիոպոլսոյ Հ.Ա.Հ. Կոկանեան Սրահի «Համբարձում Գարայեան» գրադարանին յետ բարեզարդումի բացումը կատարուած է 1971ին⁵³:

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ - ԳԱՀԻՐԷ, 1993

Գահիրէի մէջ, Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատան 4 Յունուար 1993ին բացումէն ետք, եւ Եգիպտոսի մօտ հաւատարմատար Դոկտ. Էդուարդ Նալպանտեանի նախաձեռնած աշխոյժ դիւանագիտական աշխատանքերուն կողքին, դեսպանատան մէջ հաստատուած է նաեւ տեղւոյն գրադարանը՝ առժամաբար հաւաքուած մօտ 1000 հատոր անգլերէն, արաբերէն, հայերէն եւ այլ լեզուներով՝ մասնաւորապէս Հայկական Հարցի, ինչպէս նաեւ Հայաստանի մշակութային, տնտեսական եւ քաղաքական հարցերու շուրջ նիւթերով⁵⁴:

Յաջորդական տարիներուն գրադարանի հատորներու հաւաքածոն հարստացած եւ կրկնապատկուած է բազմաբնոյթ հրատարակութիւններով եւ կազմակերպուած ու դասաւորուած այնտեղ պաշտօնավարած դիւանագիտական կազմի կանանց, Եգիպտոսի մէջ պարբերաբար հայրենի ուսանողներու եւ ազգայիններու սիրայօժար գործակցութեամբ:

29. «ՄԱՐԿՐԻԹ-ՊԱՅԾԱՌ ՅԱԿՈԲԵԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ - ԳԱՀԻՐԷ, 1993

Մատենադարանը հաստատուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի շրջանակին մէջ 1993-ին շինուած յատուկ կառոյցին մէջ՝ նախաձեռնութեամբ Ս. Եկեղեցւոյ «Շնորհալի» երգչախումբին խմբավար Եդուարդ Յակոբեանի, նուիրուած իր հանգուցեալ կողակցին եւ երգչախումբին բազմերախտ մեներգչուհի Մարկրիթ-Պայծառ Յակոբեանի յիշատակին: Մօ.Եդ. Յակոբեան, գրադարանին նուիրած է երեք հազարէ աւելի հատորներ, մամուլի եւ տարեցոյցներու հաւաքածոներ: Մատենադարանին բացումը կատարուած է 21 Նոյեմբեր 1993-ին:

ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ՔԱԶԱԼԵՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՍԱՆՈՒՅ ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ - ԳԱՀԻՐԷ, 1909-1911

⁵³ Եափուճեան Աւետիս, Պատմութիւն Հ.Ա.Հ. Կոկանեան Սրահի 1949 – 1989, Գահիրէ, 1989, էջ 39-40:

⁵⁴ Թէրզեան Պերճ, ՀՀ Եգիպտոսի Դեսպանատան Ծննդոցը, Գահիրէ, 2012:

Կազմում է 1909ին, նախաձեռնությամբ վարժարանի տնօրեն Անդրանիկ Կարապետեանի՝ նպատակ ունենալով *«օգտակար գիրքեր տրամադրելով ընթերցասիրությունը տարածել անդամակցող աշակերտության մօտ»*⁵⁵:

Ընթերցասիրաց Միությունը գործած է 18 ամիս եւ լուծուած 1911-ին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍԼՈՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ - ԳԱՀԻՐԷ , 1911-1912

Մամլոյ Ընկերությունը հիմնուած է 1 Օգոստոս 1911ին, նպատակ ունենալով *«Մամուլի եւ հրատարակութեանց միջոցաւ հայութեան եռանդը վառ պահել դէպի ընթերցասիրություն»*⁵⁶:

1911 Հոկտեմբեր 14-էն Ընկերությունը իբրեւ հրատարակիչը ներկայացած է «Արշալոյս» եռօրեայ լրագրին⁵⁷: Անորոշ տպարանէ եւ թուականին հրատարակուած է 12 էջոց սկզբունքային ուղեցոյց մը «Կանոնագիր Հայկական Մամլոյ Ընկերութեան (1911)» անունով՝ վաւերացուած 42 յօդուածներով⁵⁸:

Ընկերությունը, դժուարութիւններու ընդառաջ, կը կազմալուծուի 1912-ին:

SOUREN BAYRAMYAN ABOUT THE ARMENIAN COMMUNITY LIBRARIES IN EGYPT 1891-2016

In the Armenian community of Egypt there were a number of organizations, which had libraries and reading-halls with reach collections. In this article the libraries of these organizations and unions are introduced.

⁵⁵ Գարտաշեան Արտաշէս Հ., Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար, հտ. Բ., Վենետիկ, 1982, էջ 564:

⁵⁶ Ուսումնարան տարեգիրք, Գ.տարի 1959-1960, Գահիրէ, էջ 25:

⁵⁷ «Արշալոյս» լրագիր, Գահիրէ, 1911, թ. 181, 186-187:

⁵⁸ Պայրամեան Սուրեն, Հայ գիրքը Եգիպտոսի մէջ 1888-2011, Գահիրէ, 2012, թ. 118:

ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ՅՈՎՍԷՓ

Ամերիկահայ բանասեր, գրականագետ,
մատենագետ, թարգմանիչ, հրապարակախոս

ԱՇԽԱՐՀԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ

Բանալի բառեր՝ գրադարաններ, գրքեր, հավաքածուներ, պետություն, պատմություն

Keywords. Libraries, Books, Collections, History of the libraries

Աշխարհի առաջին գրադարանը հիմնած է Օսիմանդոս թագաւորը Ք. Ա. 1500 թուականին Մեմֆիսի մէջ: Հետագային գրադարաններ հիմնուած են Աթէնքի, Սամսոնի եւ այլ յունական քաղաքներուն մէջ:

Հռոմի մէջ Ազինոս Պոլիոնը կը հիմնէ քաղաքի առաջին գրադարանը:

Միջնադարուն տարբեր ձեռագիրներ եւ ապա հնատիպ տպագրուած գիրքեր կը կեդրոնանան վանքերուն մէջ: Անցեալին, կ'ըսեն պատմաբանները, «Ամենաթանկարժէք գիրքերը շղթայուած էին»: Վանականները մեծ պատասխանատւութիւն ունէին գիրքերը մաքուր պահելու, ընթերցանութեան համար ուրիշին չտալու, չծախելու, ձեռքէն գետին չձգելու համար: Գիրքի վրայ բիծ մը կամ էջ մը անջատելու կամ պատռելու համար մեծապէս կը յանդիմանէին անոնց, կը պատժէին:

*Ֆրանսայի մէջ Գարլոս VIII-ի ժամանակ վերջնականապէս կը ձեւաւորուի «Թագաւորական գրադարան»-ը, որը մշտապէս կը զարգանար եւ բազմաթիւ գիրքերով կը ճոխանար: Այս գրադարանը ապա կոչուեցաւ Ֆրանսայի Ազգային Մեծ գրադարան:

*Յունաստանի Փերքամում քաղաքի մօտ Քոս կղզիի մէջ Ք.Ա. հինգերորդ դարուն կը կառուցուի առաջին մասնագիտացած բժշկական դպրոցը, որը նաեւ ուներ, աշխարհի տարածքին, մասնագիտացած առաջին գրադարանը:

*Ք.Ա. 667-ին Պարսկաստանի հարաւարեւմուտքի մէջ կը հիմնուի իր ժամանակի լաւագոյն եւ մեծագոյն գրադարանը, որ կոչուած է *Կշինտիշափուր*: Այս գրադարանը ուներ աւելի քան չորս հարիւր հազար մագաղաթ:

*Այսօրուայ Իրաքի սահմաններուն Նիփիուրի մէջ Ք.Ա. 2500-ին կը հիմնուի տաճարի գրադարանը:

*9-րդ դարուն Պաղտատի մէջ Ապասիտ խալիֆան՝ **Ալ Մութաուաքէլը**, մեծ արժէք կու տար գիրք կարդալուն, այդ պատճառով հրահանգեց գրադարաններու մէջ առանձին սրահ ստեղծել «*զաուիաթ ալ կուրասա*» (կարդացողներու անկիւն) անունով:

*Պարսկաստանի Մաշատ քաղաքին մէջ կը գտնուի հին գրադարաններէն մին «Ասթան Քուտս Ռազավիի» կեդրոնական գրադարանը, որը կը գործէ աւելի քան վեց դարերէ ի վեր:

*Մալաթեսթիա գրադարանը, որ ծանօթ է նաեւ Մալաթեսթա Նովէլօ գրադարան անունով, հանրային գրադարան է, կը գտնուի Իտալիոյ Չեսէնա քաղաքը: Այս

գրադարանը կը նկատուի Եւրոպայի առաջին հանրային գրադարանը: Հիմնուած է 1447 թ.ին:

*1815-ին ԱՄՆի պետութեան որոշումով Թոմաս Ճեֆրսոնի անձնական գրադարանի 6,487 գիրքերը կը գնեն \$23,950 տոլլարի: Այս գիրքերը հիմքը կը հանդիսանան ապագայի Գոնկրէսի գրադարանին: Այս հսկայ եւ իւրայատուկ գրադարանը անգլերէնէ բացի ունի 471 լեզուներով գիրքեր: Գրադարանը նաեւ ունի հնատիպ 710,000 գիրք:

*Հունգարիա՝ Պուտափէշտի մէջ, կը գտնուի երկրի մեծագոյն Սչէչնի Ազգային գրադարանը(OSZK): Այս գրատարանը հիմնուած է 1802-ին Քոնթ Ֆերենս Սչէչնիի կողմէ: Գրադարանը ունի աւելի քան երեք միլիոն գիրք, մէկ միլիոն ձեռագիր մատեաններ, երեք միլիոն ազդաքարտ եւ փոքր տպագրութիւններ, եւ այլն:

*Աշխարհի հնագոյն գրադարանները իրենց հիմնադրութեան թուականով.

1. Մեծն Ալեքսանդրի գրադարան, Ալեքսանդրիա 288 -քանդուած:
2. Վատիկանի գրադարան, Հռոմ Չորրորդ դար
3. Եգիպտոս, Ֆաթիմաներու գրադարան 1068 -քանդուած:
4. Չէխ Հանրապետութեան Ազգային գրադարան 1366
5. Աւստրիոյ Ազգային գրադարան, Վիեննա 1368
6. Մարսիանա Ազգային գրադարան, Վենետիկ 1420
7. Ազգային Մեծ գրադարան, Փարիզ 1520
8. Մալթայի Ազգային գրադարան, Վալետա 1555
9. Պատլիըն գրադարան, Օքսֆորտ 1598
10. Զադրեպի Ազգային եւ Համալսարանի գրադարան 1606
11. Ֆինլանտայի Ազգային գրադարան, Հելսինքի 1640
12. Տանիմարքայի Ազգային գրադարան, Քոփենհակըն 1653

*Ք.Ա. 28-ին Օկոսթոս Կայսրը Հռոմի մէջ հիմնած էր երկու գրադարան՝ Փալաթին եւ Օքթավըն: Փալաթին գրադարանը հրոյ ճարակ կ'ըլլայ 191-ին:

*Ալեքսանդրիոյ աշխարհահռչակ հին գրադարանը՝ իր յարակից դպրոցով, կառուցուած էր Ք.Ա. 288 թուականին Պտղոմէոս Ա-ի կողմէ, ան ծագումով մակեդոնացի էր եւ Մեծն Ալեքսանդրի բարձրաստիճան զինուորականներէն մին:

Ալեքսանդրիոյ գրադարանը մօտ եօթը հարիւր հազար ձեռագիր գիրքերով, եղած էր քաղաքակրթութեան, գիտութեան եւ լոյսի փարոս մը: Գրադարանը հրոյ ճարակ կ'ընէ Յուլիոս Կեսար պատերազմի ժամանակ Ք.Ա. 48 թուականին: Ալեքսանդրիոյ մէջ նորակառոյց գրադարանի վերակառուցման աշխատանքները աւարտեցան 2002 թուականին, բացումը կատարուեցաւ 2003-ին: Այժմ գրադարանն ունի մօտ չորս հարիւր հազար գիրք, 6,800 ձեռագիր:

*Ք.Ե. հարիւր թուականին Հռոմի կայսր Թրաժան կը հիմնէ Ուլփիա գրադարանը:

*Պատմաբանները նշած են, որ 370 թուականին Հռոմի մէջ կը գործէր 28 հանրային գրադարաններ:

*Հնդկաստանի Ազգային գրադարանը հիմնուած է 1836-ին Կալկաթայի մէջ: Սկիզբը անհատներու բաժանորդութեամբ եւ նուիրատուութիւններով ճոխացած է գրադարանը, պետական հովանաւորութիւն չէ վայելած: Լորտ Գուրզոնի ջանքերով, Հնդկաստանի անգլիացի կառավարիչը, 1903-ին կը բացուի կայսերական հանրային գրադարանը Կալկաթայի մէջ: Երկրի անկախութենէն ետք՝ 1948 թ., գրադարանը կը կոչուի Ազգային գրադարան: Միլիոնաւոր գիրքեր ունեցող գրադարանը ունի բազմաթիւ տարբեր լեզուներով գիրքեր, ինչպէս սանսքրիթ, փունճապ, օրիէա, մարաթի, մալայան, հինտի, քաշմիրի եւ այլն:

*Արաբական Ֆաթիմիներու նշանաւոր գրադարանը կը հիմնուի Գահիրէի մէջ 1068-ին, կը քանդուի թուրքերու կողմէ:

*Զելխիոյ մէջ 1556-ին ճիզվիթները տոմինիքեան վանքի փլատակներու վրայ կը կառուցեն գոլէճ, զոր կ'անուանեն Քլեմենթինիում: 1622-ին Զարլզ համալսարանի գրադարանը կը փոխադրուի Քլեմենթինիում: 17-18-րդ դարերուն այդտեղ կը հիմնուի աստղադիտարան, եւ գրադարանը կ'ուռճանայ: 1773-1777 թուականներուն Մարի Թերեզա կայսրուհին Քլեմենթինիումը կը կոչէ կայսերական հանրային գրադարան-համալսարան: 1781-ին Ք. Ունկար կը հիմնէ Ազգային գրադարանը: Յաջորդ տարուրնէ սկսեալ Փրակայի բոլոր հրատարակիչները իրենց տպագրած գիրքերէն օրինակներ կը փոխանցեն գրադարան: Գրադարանը ունի մօտ 6 միլիոն երեք հարիւր հազար գիրք:

*Նասիոնալ Պիպլիոթէքը, Վիեննայի եւ աշխարհի ամենագեղեցիկ գրադարանը կը նկատուի: Պալատական այս սքանչելի կառոյցով գրադարանի շինութեան ծրագիրի եւ իրագործման հեղինակն է Զարլզ Զորրորդ կայսրը: Պարոք ոճով ստեղծուած եւ արուեստի բազմաթիւ գեղանկարներով, որմնանկարներով զարդարուած այս գրադարանը կ'աւարտի 1730-ին: Պիպլիոթէքը ունի աւելի քան երկու հարիւր հազար գիրք, որոնք տպագրուած են 1501-1850 թուականներուն:

*Սըր Թոմաս Պոտլի (1545-1613) անգլիացի նշանաւոր դիւանագետ եւ գիրքի հաւաքորդ էր: Ան 1602-ին Օքսֆորտի մէջ կը հիմնէ Պոտլիըն գրադարանը: 2010 թուականի տուեալներով գրադարանը ունի մօտ ինը միլիոն գիրք, դարակներու երկարութիւնը 130 մղոն է, եւ կ'աշխատին 410 հոգի:

*ԱՄՆ, Նիւ Եորքի հանրային գրադարանը հիմնուած է 1895-ին, ունի չորս հետազօտական կեդրոն եւ 87 մասնաճիւղ, 3,200 աշխատող: Գրադարանը ունի մօտ 20 միլիոն հինգ հարիւր հազար գիրք: Գրադարանի մայր շէնքը մեծ վերանորոգումներէ ետք բացումը կատարեցին 2010-ին..այդ նորոգութիւնները արժած են յիսուն միլիոն տոլար: Գրադարանը ունի 52 միլիոն կտոր նկար, թերթ, եւ այլն:

*Գաբրիէլ Նոտա (1600-1653), ֆրանսացի նշանաւոր բժիշկ, գրադարանավար եւ պատմաբան: Ան 1642-էն սկսեալ քարտինալ Մազարինի գրադարանի գրադարանավարը եղած է: Գրած է հռչակաւոր «Avis pour dresser une bibliotheque» գիրքը 1627-ին: Մազարինի գրադարանը սպասարկած է գիտնականներուն եւ գրագէտներուն:

*Տանիայի թագաւորական գրադարանը հիմնուած է 17-րդ դարուն: 1697-ին օրէնք կ'ընդունուի, որ երկրի տարածքին տպագրուած որեւէ գիրք հրատարակիչը կամ հեղինակը հինգ օրինակ պիտի դրկէ գրադարանին:

*Գրադարանները ունին իրենց դասաւորման, ըստ կարգի եւ տեսակի տասը նիւթերու խումբեր: Այս խելացի միտքը հնարած եւ գործադրած է ամերիկացի Մելվիլ Քոսուր Տըվէյը (1851-1931): Տըվէյ 21 տարեկան էր, երբ հնարեց այս ձեւը, որ մինչեւ այսօր կը շարունակուի կիրարկուիլ եւ կը կրէ իր անունը գրադարանավարութեան մէջ:

*Աշխարհի տարածքին երկիրներու մայր գրադարանները կը պարունակեն աւելի քան 260 միլիոն բնագիր գիրքեր, այլ տուեալներ ալ կան: Դժբախտաբար աշխարհի տարածքին դեռ երկու միլիարդ եւ երեք հարիւր միլիոն մարդ չեն գիտեր կարդալ, անոնցմէ շատերը գիրք չեն տեսած:

*Ուաշինկթընի Գոնկրէսի գրադարանը ունի չորս միլիոն քարտէսներ, աւելի քան 12 միլիոն լուսանկարներ, աւելի քան երկու միլիոն արձանագրութիւն, եւ գիրքերու դարակներու երկարութիւնը մօտ 900 քիլոմէթր է:

*Գերմանիա, Ուլմի մէջ կը գտնուի նշանաւոր եւ կառոյցով շատ գեղեցիկ Ուիլհէլմսկըն արքայարանի գրադարանը, հիմնուած 1093-ին:

*Ճափոնի կայսերական գրադարանը կը հիմնուի 1872-ին, որու հիմքի վրայ կը հիմնուի ներկայիս Ազգ. գրադարանը 1948-ին: Գրադարանը ունի մօտ 35 միլիոն գիրք, պարբերականներ, էլեկտրոնական արխիւ, մագաղաթներ, պաշտօնական հրատարակութիւններ, քարտէսներ, երաժշտական բազմապիսի տուեալներ, նկարներ, եւ այլն:

*ԱՄՆ, Պոսթոնի հանրային գրադարանը կը հիմնուի 1895-ին: Ան եղած է առաջին գրադարանը, որ հանրութեան գիրքեր տրամադրած է կարդալու: Գրադարանը ունի մօտ 6,2 միլիոն գիրք:

*Շուէտ, Սթոքհոլմի Ազգային գրադարանը կը հիմնուի 1661-ին: 1697-ի հրդեհի պատճառով կ'այրի շատ արժէքաւոր 1,103 մագաղաթներ, եւ հնատիպ 17,286 գիրք: Այսօր գրադարանը ունի աւելի քան 18 միլիոն՝ գիրք, մագաղաթ, նկարներ, թերթերու տեսակներ, բազմաթիւ տեսաերիզներ: Գրադարանն ունի 422 անձնակազմ:

*ԱՄՆ, Ուաշինկթընի մէջ կը գտնուի Ֆօլկըր Ծեքսպիրի գրադարանը, կը հիմնուի 1932-ին: Այս գրադարանը ունի աշխարհի տարածքին Ծեքսպիրի տպագիր գործերու մեծագոյն հաւաքածոն:

*Ըստ 2010 թուականի տուեալներուն աշխարհի առաջին տասը գրադարանները իրենց հիմնադրութեան եւ գիրքերու քանակով.

1. ԱՄՆի Գոնկրէսի գրադարանը, հիմնուած 1800-ին, Ուաշինկթըն Տ.Մ., աւելի քան 32 միլիոն գիրք եւ 138 միլիոն կտոր:

2. Չինաստանի Ազգային գրադարան, հիմնուած 1909-ին, Փեքին, ունի մօտ 25 միլիոն գիրք:

3. Ռուսիոյ Գիտութեան Ակադեմիայի գրադարան, հիմնուած 1714-ին, Ս. Փեթերսպուրկ, ունի մօտ 23 միլիոն գիրք:
4. Նիւ Եորքի Հանրային գրադարան, հիմնուած 1895-ին, Նիւ Եորք, ունի մօտ 21 միլիոն գիրք:
5. Գանատայի Ազգ. գրադարան, հիմնուած 1953-ին, Օթաուա, ունի մօտ 19 միլիոն գիրք:
6. Գերմանիոյ Ազգային գրադարան, հիմնուած 1912-ին, Ֆրանքֆուրթ, Լայպցիգ, ունի մօտ 19 միլիոն գիրք:
7. Բրիտանական գրադարան, հիմնուած 1757-ին, Լոնտոն, ունի մօտ 29.7 միլիոն միաւոր գրականութիւն:
8. Ռուսաստանի պետական գրադարան, հիմնուած 1862-ին, Մոսկուա, ունի մօտ 43 միլիոն միաւոր գրականութիւն:
9. Ռուսաստանի ազգային գրադարան, հիմնուած 1795-ին, Ս. Փեթերսպուրկ, ունի մօտ 36. 475.000 միաւոր գրականութիւն:
9. ԱՄՆ, Հարվարտ համալսարանի գրադարան, հիմնուած 1638-ին, Գամպրիճ, ունի մօտ 14 միլիոն գիրք:
10. Ուքրանիայի գիտութեան Ազգային գրադարան, հիմնուած 1919-ին, Քիեւ, ունի 13,5 միլիոն գիրք:

**NALPANTEAN HOVSEP
WORLD LIBRARIES**

Historical overview of most impressive libraries is provided.

ՄԱԴԼԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*Խնկո Ապրր անվան ազգային մանկական գրադարանի փոխտնօրեն,
Հայկական գրադարանային ասոցիացիայի քարտուղար*

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԴԵՐԸ ՀՀ
ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

*Բանալի բառեր՝ գրադարան, գրադարանային ասոցիացիա, կադրերի պատրաստում,
տեխնիկական զինվածություն, համագործակցություն*

Keywords. Libraries, Library Associations, Training, Cooperation

Գրադարանները՝ որպես գրավոր հուշարձանների հասարակական պահոցներ, հիմնվել են հնագույն ժամանակներում: Դեռևս մ.թ.ա. թագավորական պալատներին և տաճարներին կից գործել են գրադարաններ՝ իրենց տարատեսակ հավաքածուներով:

Հետագայում՝ արդեն Վերածննդի դարաշրջանում, մշակույթի զարգացմանը զուգընթաց, հատկապես տպագրության գյուտից հետո, գրադարանների թիվն ավելացավ. գրադարաններ բացվեցին բազմաթիվ երկրներում:

Հայաստանի գրադարանները բազմադարյան պատմություն ունեն: Միջնադարյան աղբյուրներում նրանք կոչվել են գրատուն, գրանոց, արկեղք գրոց, գանձատուն, մատենադարան, դիվան և այլն:

Տարիների ընթացքում զարգացավ գրադարանային գործը, աճեց նրանց թիվը, ստեղծվեցին տարաբնույթ գրադարաններ /մասսայական, գիտական, մասնագիտական/: Բնակչության կրթության մակարդակի բարձրացմանը զուգընթաց ավելացան ընթերցողների պահանջները, որոնց համապատասխան գրադարանները գրքի պահոցներից վերաճեցին գրքի քարոզչության, գիտամեթոդական և մատենագիտական տեղեկատվության օջախների:

21-րդ դարը հասարակության լայն շերտերին թելադրեց նոր վերաբերմունք և պահանջներ: Նորագույն տեխնոլոգիաները թափանցեցին նաև գրադարանային ոլորտ՝ այն դարձնելով ավելի արդիական: Նորանկախ հայոց պետությունը նոր պահանջներ առաջադրեց հանրային բոլոր ոլորտներին: Ժամանակի թելադրանքով գրադարանները ևս դարձան տեղեկատվական, մշակութային և կրթական գործունեություն իրականացնող կազմակերպություններ:

Միաժամանակ մտահոգիչ էր շատ գրադարանների վիճակը. կադրերի արտահոսք, շենքային անմխիթար պայմաններ, տեխնիկական և ֆինանսական միջոցների բացակայություն:

Ահա ինչու ժամանակի հրամայականով առաջ եկավ Հայաստանի գրադարանները միավորող, նրանց շահերը մեկտեղող կազմակերպության ստեղծման գաղափարը:

Հայաստանի «Հայկական գրադարանային ասոցիացիա» /ՀԳԱ/ հասարակական կազմակերպությունը հիմնադրվեց 1994 թ.՝ նպատակ ունենալով համախմբել հանրապետության գրադարանային աշխատողներին մասնագիտական հարցերի լուծման և շահերի պաշտպանության համար: Ստեղծման առաջին իսկ տարիներից ՀԳԱ-ն հանդես եկավ կարևոր նախաձեռնություններով, որոնք նրան ճանաչելի դարձրեցին: Պարբերաբար կազմակերպվում էին կլոր սեղաններ, քննարկումներ՝ Հայաստանի գրադարանների հիմնախնդիրների վերաբերյալ: Ասոցիացիան ձեռնամուխ եղավ մի շարք ծրագրերի իրականացմանը, որոնք անմիջապես առնչվում էին գրադարանային բազմաթիվ հիմնախնդիրների՝ հատկապես կադրերի վերապատրաստմանը, ժամանակակից գրադարանային գործընթացներին իրազեկելուն և մասնագիտական իմացությունը խորացնելուն:

ԿԱՂԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Խիստ կարևորելով գրադարանային կադրերի վերապատրաստումը՝ ասոցիացիան կազմակերպել է բազմաթիվ դասընթացներ, սեմինարներ, խորհրդատվություններ, որոնցից են՝

- դասընթացներ, սեմինարներ Երևանի և հանրապետության մարզերի գրադարանային աշխատողների համար
- համատեղ սեմինար Ամերիկյան գրադարանային միության, Վրաստանի ու Ադրբեջանի գրադարանային կազմակերպությունների հետ
- դասընթացներ գրադարանային աշխատողների համար Եգիպտոսի Արաբական հանրապետությունում
- մասնակցություն միջազգային մի շարք համագումարների, կոնֆերանսների, խորհրդակցությունների /զեկուցումներ, ելույթներ/:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- «Հայկական գրադարան» տարեգիրք, որտեղ շարունակաբար արձարծվում են գրադարանային աշխատողներին հետաքրքրող բազմաթիվ խնդիրներ
- «Հարավային Կովկասի գրադարանները և «Ով ով է գրադարանային բնագավառում» տեղեկատու
- «Գիրքը և ես» դպրոցական լավագույն շարադրությունների ամենամյա ժողովածու
- «Հոգևոր հայրենիք» թերթ՝ գրադարանային նորությունների և առօրյայի մասին

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ ԵՎ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

- եռօրյա սեմինար Երևանում 9 մարզային գրադարանների 18 ներկայացուցիչների մասնակցությամբ (նրանցից մի քանիսը, մասնակցելով ԲՀԻ-ի հայտարարած դրամաշնորհային մրցույթին, ձեռք բերեցին համակարգիչներ գրադարանի համար)
- «Տեխնիկական միջոցներ EIFL Direct ծրագրի մասնակիցների համար» դրամաշնորհի շրջանակում 9 գրադարան ապահովվեց DVD ընթերցող տեխնիկայով
- գիտաժողով «Գրադարանների թվայնացումը և հայկական էլեկտրոնային գրացուցակների ստեղծման խնդիրը» թեմայով:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ամենակարևոր նախաձեռնություններից է «Ազգային գրադարանային շաբաթ» ընդգրկուն ծրագիրը: Ամեն տարի ապրիլին անցկացվող այս միջոցառումն արդեն ավանդույթի ուժ է ստացել և նվաճել հասարակության համակրանքը: **Շաբաթի** աշխատանքներին իրենց բացմաբնույթ միջոցառումներով մասնակցում են հանրապետության գրեթե բոլոր գրադարանները, որոնց նախապես տեղեկացվում է անցկացման ժամկետի և կարգախոսի մասին: ՀՀ գրադարաններին և մշակութային տարբեր կազմակերպություններին ծանուցելու նպատակով տպագրվում և բաշխվում են պլակատ-բազմաբնույթներ ու հրավիրատոմսեր: Յուրաքանչյուր գրադարան իր կանխամշակված ծրագրով իրականացնում է տարբեր միջոցառումներ իր տարածաշրջանում, ինչպես նաև մասնակցում ՀՀ մարզերում և Երևանում այլ գրադարանների միջոցառումների:

Ասոցիացիայի ջանքերի շնորհիվ 2004 թվականից Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հոկտեմբերի 7-ը նշվում է որպես **Գրադարանավարի օր**: Այդ օրը յուրաքանչյուր գրադարան յուրովի գնահատում է գրադարանավարի աշխատանքը, ծրագրում անելիքները: Բազմաթիվ գրադարանավարներ իրենց մասնագիտական տոնին արժանանում են կառավարական պարգևների և խրախուսանքների:

Ամեն տարի Գրադարանավարի օրվան՝ **հոկտեմբերի 7-ին**, նախորդող շաբաթ օրվա ողջ երեկոյի ընթացքում անցկացվում է «**Հանդիպման վայրը՝ գրադարան/Գիշերային գրադարան/**» խորագրով ծրագիրը, որի միջոցառումների տրամաբանությունը՝ գրադարանների և գրադարանավարների դերի կարևորում, օրինաչափորեն ենթադրում է այցելություններ դեպի գրադարաններ և տարաբնույթ հանդիպումներ գրադարաններում:

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ -ում ավանդաբար նշվող **Գիրք նվիրելու օրը**՝ Փետրվարի 19-ին, օրվա խորհրդին և տրամաբանությանը համապատասխան, գրադարանների ֆոնդերի համալրմանը գործնականում աջակցելու նպատակով ասոցիացիան պարբերաբար տարբեր գրադարանների նվիրաբերում է անհրաժեշտ գրականություն:

Ասոցիացիան մեծ աշխատանք է կատարել «Գրադարանների մասին ՀՀ օրենքի», ինչպես նաև «Փաստաթղթերի պարտադիր օրինակի մասին» օրենքի նախագծի կազմման, մշակման ուղղությամբ, որոնք ընդունվել և այժմ գործում են:

Հարկ է նշել, որ 2012թ. Հայ տպագիր գրքի 500 ամյակի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երևանը Գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակվելու առթիվ հանրապետությունում իրականացված բազմաթիվ հետաքրքիր միջոցառումներին իրենց առանձին ծրագրերով հավուր պատշաճի մասնակցում էին նաև գրադարանները: Ուստի կանխատեսելի է, որ մշակութային տեղեկատվական հայաստանյան առկա միջավայրում, ժամանակի թելադրանքով տարեցտարի կարևորվելու է ասոցիացիայի դերն ու նշանակությունը: Այսօր գործնականում ավելի նպատակային պետք է կազմակերպվեն կոնֆերանսները, սեմինար-խորհրդակցությունները, թեմատիկ և մասնագիտական քննարկումները, գրադարանային փաստաթղթերի վարույթի հետ առնչվող խնդիրների իրազեկում-պարզաբանումները: Միանշանակ է, որ նորաճ նախաձեռնողական աշխատանքն ունի իր հիմնավորումը՝ ժամանակը սրընթաց առաջ է գնում, որը գրադարաններից պահանջում է սպասարկման նոր որակ, տեղեկատվական հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների օգտագործում և բանիմաց կադրեր:

Այսօր ՀԳԱ-ի առջև նո՛ր խնդիրներ են դրված, ուստի պահանջվում են նո՛ր մոտեցումներ: Պետք է իրականացվեն այնպիսի ծրագրեր, որոնք միտված կլինեն Հայաստանում զարգացնելու գրադարանային գործը, բարձրացնելու գրադարանավարների մասնագիտական իրազեկության մակարդակը, նպաստելու նոր տեխնոլոգիաների ներդրմանը, գրադարանային սպասարկման արդյունավետությանը և այլն: Նշենք, որ ՀՀ-ում գործում են 2 ազգային, 3 հանրապետական և 834 հանրային բնույթի՝ քաղաքային, գյուղական և մանկական գրադարաններ:

Այցելությունները մարզեր ցույց են տալիս, որ հատկապես վատ են համալրվում և մասնագիտական օժանդակության կարիք ունեն ՀՀ հեռավոր վայրերի գյուղական և դպրոցական գրադարանները: ՀԳԱ-ն պարբերաբար կատարում է իր բովանդակային վերլուծությունները և, հետևաբար, կանխատեսում, որ անհրաժեշտ է իրականացնել ծրագրեր, որոնք միտված կլինեն հնարավորինս բարելավելու Հայաստանի գրադարանների վիճակը, օժանդակելու գրադարանային հավաքածուների համալրմանը և բարձրացնելու գրադարանավարների մասնագիտական պատրաստվածության մակարդակը:

Ի ուրախություն մեզ, ԱՄՆ Իլինոյսի համալսարանում (Ուրբանա-Շամպեյն) գործող Միջազգային գրադարանային ծրագրերի մոթթենստնյան կենտրոնը Գետտի հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ ծրագրում է 2016 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում՝ շուրջ 100 գրադարանավարների վերապատրաստում իրականացնել Հայաստանում: Ուսուցման գործընթացը կազմակերպվելու է տեղի՝ հայաստանցի գրադարանային մասնագետների ուժերով:

Իր առջև դրված խնդիրները իրագործելու նպատակով ՀԳԱ-ն համագործակցում է Ազգային գրապալատի, Գրողների միության, տեղական և միջազգային

հասարակական կազմակերպությունների, դեսպանատների հետ: Ավելի փոխգործուն և արդյունավետ է կապը Հրատարակիչների ազգային ասոցիացիայի հետ, որի հետ մշակվել և իրագործվել է «Աջակցություն գրադարաններին» ծրագիրը /գրքերի նվիրատվություն, պահանջարկային գրականության հրատարակում, գրքի տոնավաճառների կազմակերպում/:

Անվիճելի է, որ ժամանակակից գրադարանները, անկախ տեսակից և գտնվելու վայրից, պետք է ունենան նորմալ շենքային պայմաններ, կահավորում, համալրում և տեխնիկա. նրանք պետք է զարգանան որպես մշակութային արժեքների պահպանողներ և ժամանակակից տեղեկատվական կենտրոններ:

Այսօր ՀԳԱ-ն կարևորում է գործունեության հետևյալ հիմնախնդիրները.

- գրադարանավարների վերապատրաստման դասընթացների կազմակերպում
- գրադարանային չափորոշիչների մշակում
- «Վաստակավոր գրադարանավար» կոչման վերականգնում
- Միջոցառումների /Ազգային գրադարանային շաբաթ, Գրադարանային գիշեր, Գրադարանավարի օր/ և հանդիսությունների կազմակերպում
- մասնագիտական՝ գրադարանային սեմինարների, կոնֆերանսների կազմակերպում /տեղական և միջազգային/
- «Գրադարանի բարեկամ» մրցանակի վերականգնում

Հայկական գրադարանային ասոցիացիայի գերիսնդիրներից է մեր գրադարանային հանրությանը միջազգային ասպարեզում ինտեգրելը. Քաղաքակիրթ, տեղեկացված և կիրթ հասարակություն ձևավորելուն նպաստելը: Մասնագիտական միությունը հատկապես կարևորում է ժամանակակից պատանու և երիտասարդի դաստիարակությունը:

Այսօր ՀԳԱ-ի հաջողության նախապայմանը միության անդամների համախմբվածությունն ու նախաձեռնողականությունն է: Կարևոր նշանակություն ունի նաև պետական և հասարակական կառույցների աջակցությունը, որի առկայությամբ և մասնագիտական գիտակցված համախմբվածությամբ կարելի է հասնել շոշափելի արդյունքների:

MADLEN HOVSEPYAN

The role of the Armenian Library Association in bridging the libraries in the Republic of Armenia

The brief history of establishment of the Armenian Library Association and its activities towards building innovative library network in Armenia is presented. Armenian Library Association's priorities are highlighted, and future plans are introduced.

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

ԵՎ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՄԵԾ ԱՎԱՆԴԸ


Բանալի բառեր՝ Գրադարան, բարերար, հովանավոր, նվիրատվություն:

Keywords. Library, benefactor, patron, donation.

Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարությունը, հասկանալով և կարևորելով մշակույթի և կրթության եզակի դերը ազգապահպանության և պետականության կայացման գործում, մեծ ուշադրություն էր դարձնում լուսավորչական կառույցների ստեղծմանը: 1919 թ. հունիսի 4-ի Հայաստանի Մինիստրների Խորհրդի նիստում, Համաձայն Հայաստանի Խորհրդի 1919 թ. հունիսի 5-ին ընդունած օրենքի, ընդունվում է «Պետական մատենադարանի մասին» օրենքը /տե՛ս նկար 1/, ըստ որի գրադարանը ստանում է պետական գլխավոր գրադարանի կարգավիճակ¹:

1919-1921 թթ.-ին գրադարանի առաջին տնօրեն Ստեփան Կանայանի ջանքերով հավաքվում են Թիֆլիսի, Բաքվի, Ախալցխայի և Կարսի հայկական կազմակերպությունների, ընկերությունների, ուսումնական հաստատությունների գրադարանները և դրանք՝ տեղափոխում Երևան: 1925-1990 թթ. գրադարանը կրել է նշանավոր պետական և հասարակական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանի անունը, իսկ 1990 թ. վերանվանվել է Հայաստանի ազգային գրադարան:

¹ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 91:



Նկ. 1 «Պետական մատենադարանի մասին» օրենքը²

Գրադարանը տեղավորված է 4 մասնաշենքում: Ամենահինը՝ Ալ. Թամանյանի նախագծած գլխավոր մասնաշենքն է (1939 թ.): Թամանյանը, ձեռքի տակ ունենալով գրադարանների տարբեր նախագծեր, ստեղծեց Հայաստանի հանրային գրադարանի շենքի նախագիծը, որը մշակել էր դեռևս 1919-20թթ. ընթացքում, Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին:

Թամանյանի նախագծով կառուցված Հանրային գրադարանի շենքն իր վրա կրում է ն՝ կլասիցիզմի, ն՝ պարզ ու խիստ ազգային ճարտարապետության ավանդույթները: Օգտագործված է Հայաստանի բնական շինանյութերից տուֆ քարը:³ Թամանյանական մասնաշենքի կառուցումը ֆինանսավորել են Խորհրդային Հայաստանի կառավարությունը և «Գրիգոր ու Կարապետ Մելքոնյան» հիմնադրամը: Գրիգոր (1843-1920) և Կարապետ (1849-1934) Հարությունի Մելքոնյան եղբայրները մեր ժողովրդի արժանահիշատակ գավակներից են: Նախնական կրթությունը ստացել են ծննդավայր Կեսարիայի Գյումուշյան վարժարանում, ապա զբաղվել առևտրով: 1882 թ. Ջազազիզում հիմնել են «Գրիգոր և Կարապետ Մելքոնյան» ծխախոտի ֆիրմայի առաջին գործարանը, որը հետագայում տեղափոխվեց Ալեքսանդրիա: 1900 թ. Կահիրեում կառուցել են նոր գործարան: Գրիգորը զբաղվում էր տեղական գործառնություններով, իսկ Կարապետը՝ հումքի գնմամբ և արտադրության ընդհանուր վերահսկմամբ: Մելքոնյանների արտադրանքն ուներ շատ լայն սպառում:

² Հաշվի առնելով բնօրինակի խոնացածությունը, հավելված 1-ում բերված է «Պետական մատենադարանի մասին» օրենքի համակարգչային շարվածքը:

³ Հայաստանի ազգային գրադարանի պատմության ուրվագծեր (1832-1925), Եր., 2007, էջ 146:

Ավագ եղբոր մահից հետո (1920 թ.) Կարապետն իր և եղբոր ամբողջ ունեցվածքը տրամադրում է Հայաստանի Առաջին Հանրապետությանը, ինչի համար արժանանում է «Ազատ Հայաստանի արտասահմանյան առաջին հայ քաղաքացի» կոչմանը: 1921-1925 թթ. Կարապետ Մելքոնյանը մի քանի անգամ կազմում է նոր նվիրատվության ակտեր: Իսկ 1925 թ. Ալեքսանդրիայում Կարապետ Մելքոնյանի կողմից կազմվում է նոր ակտ և ամբողջ նվիրատվությունը փոխանցվում Հայկական բարեգործական ընդհանուր միությանը (ՀԲԸՄ): Մելքոնյան հիմնադրամը Թամանյանական մասնաշենքի շինարարության համար հատկացրել է 1 մլն. 369.650 ռուբլի, իսկ կառավարությունը 1 մլն. 219.873 ռուբլի: 1937 թ. փետրվարին գրադարանի շինարարության մեծ մասն արդեն ավարտվել էր, նույն տարվա դեկտեմբերի 8-ի Հայկական ԽՍՀ կառավարության որոշմամբ Մելքոնյան հիմնադրամի գործունեությունն արգելվեց:⁴

2014 թվականին Հայաստանի ազգային գրադարանում տեղի ունեցավ ցուցանակի տեղադրում, որի վրա նշված է հիմնադրամի ղեկավարներ, այժմ արդեն հայտնի բարերարներ Գրիգոր և Կարապետ Մելքոնյանների անունը:

Հայ մեծ բարերարներ Գրիգոր և Կարապետ Մելքոնյանների հայրենասիրական մղումների և ջանքերի շնորհիվ կառուցված Հայաստանի ազգային գրադարանի պահոցներում՝ զանազանում պահպանվում են հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրք» (1512թ., Վենետիկ), առաջին պարբերականը՝ «Ազդարարը» (1794թ., Մադրաս), առաջին տպագիր քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյցը» (1695թ., Ամստերդամ):

⁴Խաչատուր Դադայան: Մելքոնյան եղբայրները և Ազգային գրադարանը: Աղբյուրը՝ Իրատես.am <http://www.irates.am/hy/1410508228>

ՕՐԷՆՔ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Յօդ. 1. Պետական Մատենադարանը գտնուում է Հանրային Կրթության եւ Արւեստի Մինիստրութեան իրաւասութեան տակ:

Յօդ. 2. Պետական Մատենադարանը կազմում է ա/ Հայաստանի սահմաններում ապրող բոլոր հրատարակութիւնների երեքական օրինակ պարտադիր առաքումներից, բ/ Դրամով ձեռք բերած կամ նւիրաբերած տպագրութիւններից, ձեռագրերից, յատկագծերից, քարտէզներից, նկարներից, քանդականկարներից, /Гравюра/, ալբոմներից, լուսանկարներից եւ գիտութեան բոլոր ճիւղերի փորագրութիւններից. գ/ գրադարանների ամբողջութեամբ կամ Հանրային Կրթութեան Մինիստրութեան հիմնարկութիւններից կամ այլ պետական հաստատութիւններից Հանրային Կրթութեան Մինիստրի կամ Կառավարութեան կարգադրութեամբ ամբողջութեամբ կամ մասնակի կերպով սեփականութիւն արւած գրադարաններից:

Յօդ. 3. Պետական Մատենադարանին կից հիմնուում է ընթերցարան: Ինչպէս ընթերցարանից այնպէս եւ մատենադարանից կարելի է օգտուել միմիայն գիտական նպատակների համար, Հանրային Կրթութեան եւ Արւեստի Մինիստրի հրատարակած կանոնների համաձայն:

Յօդ. 4. Պետական Մատենադարանը, ինչպէս գիտական նոյնպէս եւ տնտեսական մասերում գտնուում է Հանրային Կրթութեան եւ Արւեստի Մինիստրի առաջարկութեամբ Մինիստրների Խորհրդի կողմից հաստատուած տեսչի անմիջական ղեկավարութեան տակ:

Մինիստրների Խորհրդի Գործերի Կառավարիչ՝ Գ. Խօջամիրեան.

Սույն օրէնքը հաստատուած է Մինիստրների Խորհրդի 1919 թ. յուլիսի 4-ի նիստում, Համաձայն Հայաստանի Խորհրդի 1919 թ. յունիսի 5-ին ընդունած օրէնքի:

ARGHUTYAN ANI NATIONAL LIBRARY AND THE “MELKONIAN BROTHERS” FOUNDATION SUMMARY

In the article philanthropic activities of Grigor and Karapet Melkonian brothers to support construction of the National Library of Armenia “Tamanyan” building are provided.

**ԱՆԴՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ
ՏԱՐԵԹՎԻ ՇՈՒՐՁ ԾԱՎԱԼՎԱԾ ԲԱՆԱՎԵՃԻՆ**

Հայաստանի ազգային գրադարանի հիմնադրման տարեթիվը տասնյակ տարիներ եղել է բուռն քննարկման առարկա: Բանավիճող կողմերը փաստում էին և փաստում են, որ Ազգային գրադարանը ձևավորվել է Երևանի գավառական գիմնազիայի գրադարանի հիմքի վրա, ուրեմն՝ Ազգային գրադարանը կազմակերպվել է 1832 թվականից, իսկ հակառակ կողմը պնդում և փաստում էր, որ Հայաստանի ազգային գրադարանը ստեղծվել է 1919 թ.: Հիմնական փաստարկն այն է որ գրադարանի ծննդյան տարեթիվ պետք է համարել պետության կողմից դրա հիմնադրման մասին իրավական փաստաթղթի առկայությունը: Բանավեճը շարունակվում է առ այսօր:

Ընթերցողի դատին ենք հանձնում Արամ Բաբայանի հոդվածը՝ տպագրված «Գրադարանավար» ամսագրում 1961 թ. (թիվ 3)՝ հաստատելով ու ամրագրելով այն փաստը, որ Խորհրդային Հայաստանում ևս գրադարանավարների մոտ եղել են տարակարծություններ և 1832 թվականը որպես գրադարանի հիմնադրման տարի ընդունելը լուրջ քննադատության տեղիք է տվել:

Ե՞ՐԲ Է ՀԻՄՆԱԴՐՎԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Վերջերս Ալ. Մյասնիկյանի անվան ռեսպուբլիկական գրադարանը լույս ընծայեց Ռ. Իշխանյանի և Ն. Ոսկանյանի «ՀՍՍՌ Ալ. Մյասնիկյանի անվան պետական ռեսպուբլիկական գրադարանը» վերնագրով բրոշյուրը: Մի կողմ թողնելով բրոշյուրի քննարկումն ըստ էության, նրանում տեղ գտած անճշտություններն ու սխալ տեղեկությունները՝ հարկ ենք համարում կանգ առնել միայն մի հարցի լուսաբանման վրա:

Բրոշյուրի «Գրադարանի պատմությունից» հատվածը սկսվում է հետևյալ նախադասությամբ. «Ալ. Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանի պատմությունն անմիջականորեն առնչվում է Երևանի գիմնազիայի և նրա գրադարանի պատմության հետ»: Այնուհետև տրված է այդ գիմնազիայի գրադարանի համառոտ պատմությունը՝ սկսած 1832 թվից, Երևանի գավառական ուսումնարանի գրադարանի կազմակերպումից մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում: Դրանից անմիջապես հետո հեղինակները վճռականորեն հայտարարում են, թե 1921

թվի Հայաստանի Պետական Հանրային գրադարանը կազմակերպվել է «Երևանի գիմնազիայի գրադարանի 18.000 միավոր գրականության բազայի վրա» (էջ 5): Եվ

որպես թե հետագայում Հանրային գրադարանի ֆոնդերի կազմի մեջ մտան Թիֆլիսից բերված Կովկասի հայոց բարեգործական ընկերության, Ներսիսյան դպրոցի, Թիֆլիսի ժողովարանի, «Մշակ» թերթի խմբագրության և այլ կազմակերպությունների գրադարանների ֆոնդերն ու անհատական հավաքածուները:

Այսպիսով ստացվում է, որ Հանրային գրադարանն իր սկզբնավորումը առնելով 1832 թվականից՝ Երևանի գավառական ուսումնարանի գրադարանից, ունի մոտ 130 տարվա պատմություն: Որքան լավ կլիներ, եթե դա իրականությանը համապատասխաներ: **ԴԺԲԱԽՏԱԲԱՐ ԴԱ ՄԻԱՅՆ ԲԱՐԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ Է և ՉՈՒՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՉ ՄԻ ՀԻՄՔ:**

Իսկ ո՞րն է իրողությունը:

Հանրային գրադարանը **ՄԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱԶԱՅԻ ՎՐԱ ԶԻ ՍՏԵՂԾՎԵԼ:** Գրադարանի առաջին վարիչը՝ մանկավարժ և բանասեր Ստ. Կանայանը, Թիֆլիսի հայկական կուլտուրական կազմակերպություններից և ուսումնական հաստատություններից, ինչպես նաև առանձին անհատներից նվերի կարգով կամ գնման միջոցով ձեռք է բերում մոտ 40.000 միավորի հասնող գրականության մի հավաքածու, որը 1921 թվին Թիֆլիսից փոխադրվում է Երևան: Այդ հավաքածուի մեջ մտնում էր Կովկասի հայոց բարեգործական ընկերության գրադարանի մի մասը, Ներսիսյան դպրոցի, Թիֆլիսի հայոց ժողովարանի գրադարանների մի մասը, իշխան Ն. Արղության-Երկայնաբազուկի, Մուրացանի անհատական գրադարանները ու անհատների հավաքածուները: **ԱՀԱ ԱՅԴ 40.000 ՄԻԱՎՈՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ Է, ՈՐ ՀԱՆԴԻՍԱՅԵԼ Է ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԲԱԶԱ:** Ինչպես տեսնում ենք, այդ բազան մի գրադարան չէ, այլ մի շարք կազմակերպությունների ու անհատների գրադարաններից կազմված հավաքածու է:

Իսկ ե՞րբ է միացվել Երևանի գիմնազիայի գրադարանը (ի դեպ ոչ թե մի գիմնազիայի, այլ Երևանի երկու գիմնազիաների գրադարանների ֆոնդերը, որ կազմում էր 18.000 միավոր) Հանրային գրադարանին: Այդ միացումը նույնպես ունի իր պատմությունը:

Հայտնի է, որ մինչև սովետական կարգերի հաստատումը, դպրոցական գրադարանների ֆոնդերը կազմված լինելով նախառնույունցիոն շրջանի գրականությունից, որպես այդպիսին, նոր, սովետական դպրոցի համար մեծ մասամբ անարժեք էին, չէին համապատասխանում նրա առջև դրված ուսումնա-դաստիարակչական խնդիրներին: Եվ Լուսժողկոմատի Քաղլուսգլխավարչությունը սովետական կարգերի հենց առաջին տարիներից սկսած Հայաստանի քաղաքների և գյուղերի դպրոցական գրադարանները պարբերաբար գտման էր ենթարկում և հանված ամբողջ գրականությունն ուղարկում Հանրային գրադարան: Այդ գրականությունը պահվում էր գրադարանի նկուղներում և չէր միացվում գրադարանի գործող ֆոնդերին, որով-

հետև դրա մեծագույն մասը կրկնօրինակներ էին: Հերթը հասավ Երևանի գիմնազիաների գրադարաններին: Լուսժողկոմատի կարգադրությամբ 1928 թվին ես ինքս եմ Հանրային գրադարան փոխադրել այս գրադարաններից նախօրոք ընտրված գրականությունը, որի ընդհանուր քանակը կազմում էր 18.000 միավոր: **ԱՅՌ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՒՑՆՊԵՍ ՄԻԱՑՎԵՑ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՆԿՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՅԼ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ, ԹՈՂ ՏԱՐՕՐԻՆԱԿ ՉԹՎԱ, ՈՐ ՄԻՆՉԵՎ ՀԻՄԱ ԷԼ ՄՆՈՒՄ Է ԳՐԱԴԱՐԱՆԻ ՆԿՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՄՇԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ:**

Այդ բոլորից հետո հարց է առաջ գալիս, կարելի է ասել, որ Հանրային գրադարանը կազմակերպվել է Երևանի գիմնազիայի գրադարանի բազայի վրա միայն նրա համար, որպեսզի գրադարանի պատմությունն սկսվի 1832 թվականից: Եթե այդ ձևով մոտենանք, ապա կարող ենք Հանրային գրադարանի սկզբնավորումն էլ ավելի առաջ տանել: Չէ՞ որ Հանրային գրադարանին է միացված Ներսիսյան դպրոցի գրադարանի մի մասը, որը հիմնադրվել է 1824 թվին կամ Հանրային գրադարանի հիմնադրումն սկսենք 1815 թվականից՝ կապելով Լազարյան ճեմարանի գրադարանի հետ, որի ֆոնդերի զգալի մասը ստացել է Հանրային գրադարանը:

Եթե Վրաստանի Կ. Մարքսի անվան Հանրային գրադարանն իր սկզբնավորումը համարում է 1846 թվից կամ Լենինի անվան ՍՍՌՄ Պետական գրադարանը՝ 1862 թվից, ապա դրանք հիմք ունեն, որովհետև այդ գրադարաններից յուրաքանչյուրը կազմակերպվել է կոնկրետ մեկ գրադարանի բազայի վրա: **ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆ ԱՅՐՊԻՄԻ ԲԱԶԱ ՉԻ ՈՒՆԵՑԵԼ: ԵՎ ԵԹԵ ՄԵՆՔ ԱՇԽԱՏԵՆՔ ԱՅՐՊԻՄԻ ԲԱԶԱ ՀՈՐԻՆԵԼ, ԱՊԱ ԴԱ ԿԼԻՆԻ ՄՏԱՑԱԾԻՆ ԵՎ ՈՉ ՃԻՇՏ:**

Ավելորդ չենք համարում հիշեցնել բրոշյուրի հեղինակներին, որ Հանրային գրադարանի 30-ամյակի նախօրյակին գրադարանի դիրեկցիան զբաղվեց այդ հարցով, թե արդյոք չի՞ կարելի գրադարանի պատմությունը սկսել Երևանի գավառական գիմնազիայի կազմակերպումից: Հարցը մանրամասն ուսումնասիրվեց և քննության առնվեց: Սակայն ինչպես վերադաս մարմինները, նույնպես և գրադարանի դիրեկցիան եկան այն հաստատ եզրակացության, որ այդ անել չի կարելի, որովհետև դա կլինի հակապատմական, բռնազբոսիկ և կեղծ:

Ա. ԲԱԲՍՅԱՆ

Հայկական ՍՍՌ գիտ. ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի գրադարանի դիրեկտոր, վաստակավոր գրադարանավար

*Խնկո Ապրո անվան ազգային մանկական
գրադարանի գիտնական քարտուղար*

© National Library of Armenia

հնարավոր տարբերակներ, գտնել ստեղծագործող անհատին, գրահրատարակչին և ընթերցողին առերեսելու և համախմբելու օպտիմալ տարբերակը: Մակայն, ի նորախություն մեզ, վերջին տարիներին Հայաստանում ԳՐՔԻ տոնավաճառը նորանոր հետաքրքրվողներ և այցելուներ է ներգրավում և ամենաակտուալ երաշխավորներից է գրքի և տպագրության հարատևության:

Տոնավաճառներն աշխարհի մշակութային համայնապատկերում իրենց նախապատմությունն ունեն: Աշխարհի գրքի խոշորագույն ցուցահանդեսը՝ Ֆրանկֆուրտյան տոնավաճառը, իրականացվում է 1949 թվականից, թեպետ իրականում Ֆրանկֆուրտի գրքի տոնավաճառի տարիքն ավելի մեծ է: Նրա հիմնումը անմիջական աղերսներ ունի՝ Ֆրանկֆուրտին հարևան Մայնց քաղաքում ապրած առաջին տպագրիչ Գուտենբերգի անվան հետ, ով ստեղծեց առաջին տպագրահաստոցը: Շուտով հենց Ֆրանկֆուրտը դարձավ գրահրատարակչության, հետևաբար՝ նաև գրավաճառության առաջին կենտրոնը: Դեռ վերջինիս կենդանության օրոք գրավաճառները կազմակերպեցին աշխարհում տպագիր գրքի առաջին տոնավաճառը (առաջին անգամ կազմակերպվել է 1473 թ., պարբերաբար իրականացվում է 1574 թ.): **Frankfurter Buchmesse**-ը մինչ այսօր կազմակերպվում է Գերմանիայի կենտրոնում՝ դառնալով մոլորակի գրքային ամենամյա անցուդարձի և Եվրոպայի գրքի կենտրոն: Այն համախմբում է աշխարհի գրեթե բոլոր հայտնի հրատարակիչներին, գրողներին, գրավաճառներին, ընթերցողներին:

Գրքի տոնավաճառի ավանդույթները շարունակվում են աշխարհի տարբեր երկրներում և ամեն տարի կազմակերպվում իրենց հայեցակարգին համապատասխան, հետևաբար մեծ նշանակություն ունի գրքի միջազգային ցուցահանդեսների անմիջական ուսումնասիրությունը, ինչը հնարավորություն կստեղծի համաշխարհային փորձի հիման վրա կատարելագործելու գրքի երևանյան «յուրահատուկ տոները», որոնք սկսեցին կազմակերպվել գրքի նկատմամբ խորացող անտարբերության, մանկապատանեկան ընթերցանության ակնհայտ խնդիրների և դրանք հաղթահարելու հրամայականի պարագայում:



Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում գրքի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու տարաբնույթ միջոցառումների համատեքստում գրքի տոնավաճառն առաջնահերթություն է դարձել. տոնավաճառի «Էպիկենտրոն»-ը անվրեպ է ընտրված. նա՛խ մանուկների՝ մեջ պետք է արմատավորել սերը գրքի և ընթերցանության նկատմամբ: Բազմաթիվ ընթերցողներ ունեցող ազգային մանկական գրադարանում, որտեղ գիրքը սպասարկելուն զուգահեռ բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպվում, այսուհետ ջերմ հյուրընկալություն են գտնում գրքի նախորոշված տոնավաճառների այցելուները:

Մանկական գրադարանը սկսած 2003 թ. ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ Հրատարակիչների ազգային ասոցիացիայի (այս տարի համակազմակերպիչ էր նաև IBBY Հայաստանը) հետ համատեղ կազմակերպում է Մանկապատանեկան գրքի երևանյան ամենամյա տոնավաճառ:

Գրքի ցուցահանդես-վաճառքներ, ըստ էության, տարվա ընթացքում իրականացվում են և՛ որպես ինքնուրույն միջոցառում, և՛ ներառվում տարբեր մշակութային ծրագրերի ցանկում (տոնավաճառներ են կազմակերպվում ամենամյա «Դարձ առ գիրք» գրքարվեստի փառատոնի, մշակութային և գրադարանային նախաձեռնությունների ընթացքում):



Գրադարան-գրահրատարակիչ շփման եզրերն ակնառու են՝ տոնավաճառի օրերին մանկապատանեկան գրքի ոլորտի առաջատար հրատարակչությունները ներկայացնում են ճանաչողական, գեղարվեստական, մանկական լավագույն հրատարակչություններ:

Անգամ այն անպարագիծ սերը, որ տածում էր Ամենայն հայոց քանաստեղծը գրքի նկատմամբ, իր անուղղակի անդրադարձն ունի տոնավաճառի կոնցեպցիայի վրա. նրա ծննդյան օրը՝ փետրվարի 19-ը, որ Հայաստանում նշվում է որպես Գիրք նվիրելու օր, մշտապես հաստատագրված է տոնավաճառի ամենամյա ժամանակացույցում՝ նպատակ ունենալով գիրքը կարևորելու նրա պատգամը փոխանցել այսօրվա պատանիներին:



Ցուցահանդես-տոնավաճառը միտում ունի ամրապնդելու *գիրք-ընթերցող* կապը, հանրությանը ծանոթացնելու ՀՀ հրատարակիչների նոր լավագույն հրատարակություններին և մանկապատանեկան գրաշուկայի ժամանակակից տենդենցներին:



Մանուկների և պատանիների շրջանում գրքի և ընթերցանության նկատմամբ սեր և հետաքրքրություն սերմանելու նպատակով տոնավաճառների ընթացքում իրականացվում են անհատական և խմբային այցելություններ, փոքրիկ և պատանի ընթերցողների կողմից սիրված բազմաթիվ միջոցառումներ՝ բարձրաձայն ընթերցանություններ, գրողների, նկարազարդողների հետ հանդիպումներ, շնորհանդեսներ, էքսկուրսիաներ, զրույցներ, գրքերի նվիրատվություններ, հեքիաթների և երաժշտության խմբակային ունկնդրումներ, նոր գրքերի տեսություններ, էլեկտրոնային թեմատիկ ծանոթացումներ և կինոդիտումներ, որոնք էլ ավելի արդյունավետ են դարձնում գիրք-ընթերցող «հանդիպում»-ը:

Գրքի ուշագրավ «տոների» շարունակականությունը և տարեցտարի ավելացող այցելուների թիվը հաստատում է, որ նրանք համապատասխանում են իրենց առաքելությանը և շարունակում կատարել գրասեր հանրությանը համախմբելու, գրահրատարակչական դաշտի զարգացմանը նպաստելու և, որ գործնական առումով

ամենակարևորն է, գրող-հրատարակիչ-գրադարանավար (ընթերցանությունը կազմակերպող)-ընթերցող փոխներգործուն կապը ստեղծելու իրենց դերը, *որը կարող է նախադրյալներ ստեղծել գրաշուկայի, հրատարակչական և գրադարանային ոլորտների դրական փոփոխությունների համար:*

Ամփոփում

Մանկապատանեկան գրքի երևանյան ամենամյա տոնավաճառները գիրք-ընթերցող-հրատարակիչ կապը ամրապնդելու, ընթերցանությունը խթանելու և ընթերցող հանրությանը համախմբելու լավագույն միջոցներից է:

RUZAN TONoyAN GAYANE KARAPETYAN SUMMARY

Annual Children's Yerevan book fair is the best way to strengthen the “book-reader-publisher” interrelations and to stimulate reading and gather together reading society.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱՅՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԿԵՆՈՒՄ
ՉԱՐՏԱՅՈՒՎԱԾ ԳՐՔԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ**

Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուներում պահպանվող հսկայածավալ գրականությունը հայ ժողովրդի մշակութային ժառանգության անքակտելի մասն է: Հավաքածուները պարբերաբար մշակվում են, որի արդյունքում հայտնաբերվում են գրքեր, որոնք անհայտ պատճառներով չեն նկարագրվել գրացուցակներում, չեն ներառվել հայ գրքի մատենագիտական ցանկերում կամ էլ նշվել են աստղանիշով, այսինքն՝ մատենագրողը տվյալ գիրքը չի տեսել: Խոսքը հիմնականում կազմակից գրքերի մասին է, որոնց քանակը Ազգային գրադարանում բավական մեծ է: Այս շարքում պետք է առանձնացնել հատկապես հայատառ թուրքերեն գրքերը, որոնց մշակումը թերի է եղել: Այսօր այդ բոլոր գրքերը սքանավորվում, թվայնացվում և ներառվում են «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում՝ ընթերցողին հասանելի դարձնելու համար:

Ներկայացնենք մշակման արդյունքում հայտնաբերված մի շարք գրքեր, որոնք աստղանիշով են նշված արդեն տպագրված մատենագիտություններում¹: Նշենք նաև, որ ստուգման աշխատանքները շարունակվում են, և հաջորդաբար կներկայացնենք այլ գրքեր, որոնք նախկինում դուրս են մնացել գրացուցակներից: Այսօր այդ գրքերն առկա են Հայաստանի ազգային գրադարանի պահոցներում:

¹ Նկատի ունենք Հայ գիրքը 1851-1900 թվականներին /Ն. Ոսկանյան և ուրիշներ, Մատենագիտություն, Երևան, Գիրք, 1999, 860 էջ: Դավթյան, Հայկ, Հայ գիրքը 1801-1850 թվականներին, Մատենագիտություն, Երևան, 1967, 538 էջ:

Ազիզ վախտեթուլլահըն միւճիզեթլերին քիթապը: Լիսանի Էրմենիտեն թերճիւմէ օլունտու թիրք լիսանինէ՝ Քիթահեալը Վ. Հ. Ստեփաննոս Մարաց Վէքիլ Վարդապետտէն.- Վիեննա: Տպ. Մխիթարյան, 1818.- ԺԶ, 403 էջ: Հայատառ թուրքերեն: Գրքում կա տպագրական վրիպակ՝ էջ 374-ը բացակա է, փոխարենը տպված է կրկնակի 376-րդ էջը տարբեր բովանդակությամբ: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտության մեջ 321 համարի ներքո, աստղանիշով¹: Ցուց. Վիեն. Մխիթ. 73	
Մենեթի (Յիսուսեան): Թեօվալեքեար աստա: Էյի խոստովանանք օլմագ իչին Թալիմաթ պապընտա.- Վենետիկ: Ս. Ղազար, 1827.- 199 էջ: Հայատառ թուրքերեն: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտության մեջ 562 համարի ներքո, աստղանիշով: Էջերի քանակը նշվել է 176: Ցուց. Վենետ. Մխիթ. 156	
Թալիլի գայրզգը: Սատագաթըլըզ փեք կիզել տիր.- Մալթա կղզի: Տպ. «Մարդասիրական Ընկերութեանն Ամերիկացոց», 1829.- 20 էջ Հայատառ թուրքերեն: Շարվածքը՝ 14x8 սմ: Կազմը՝ զարդափակ, վրան՝ նկար, նույն նկարը՝ նաև տիտղոսաթերթին: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտության մեջ 635 համարի ներքո, աստղանիշով: Վերնագիրը նշվել է «Թալիլի վայրզգը», Էջերի քանակ չի նշվել: Թեոդիկ², 171	
Ազիզ Վինջենցո ֆերրարինին հիգմեթլի էօմրիւնին մուխթասար իճմալի.- Վիեննա: Տպ. Մխիթարյան, 1835.- 81 էջ: Հայատառ թուրքերեն: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտության մեջ 840 համարի ներքո, աստղանիշով: Վերնագիրը նշվել է «Ազիզ Վինջենցո Աերրարինին հիքմեթլի էօմրիւնին մուխթասար իճմալի»: Ցուց. Վիեն. Մխիթ. 73	

¹ «Լիակատար ցուցակ գիրքերու Մխիթարեան տպարանին (1716-1910)», Վենետիկ, 1910:

² Թեոդիկ, «Տիպ ու տառ», Կ.Պոլիս, 1912:

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Եկնի տուա քիթապը. -Վիեննա: Տպ.Մխիթարյան, 1839.-8, 460 էջ: Հայատառ թուրքերեն: Գրքում կան տպագրական վրիպակներ՝ էջ 19-ի փոխարեն տպագրված է 12, 112-ի փոխարեն՝ 211, 378-ի փոխարեն՝ 478: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտության մեջ 978 համարի ներքո, աստղանիշով: Էջերի քանակը նշվել է 496: Ցուց. Վիեն. Մխիթ. 69	
Բարեպաշտություն: Եախօտ տինտար էօմիւր դապիաթընշն իւզերինէ պազը մուխթասար թարիֆլէր.- Զմյուռնիա: Տպ. Գուլիելմոս Գրիֆիտի, 1844.- 66 էջ: Հայատառ թուրքերեն: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտության մեջ 1298 համարի ներքո, աստղանիշով: Զ Մատ¹. 104: Ղ². 1. 319: Թ 135	
Տինին թեմլիի պօրճլարընըն կենճ քրիստոնեայէ թարիֆի: Պատուելի Յակոբոս ապաօթուն թելիֆի.- Զմյուռնիա: Տպ. Գուլիելմոս Գրիֆիտի, 1844.- Զ, Թ, 350 էջ: Հայատառ թուրքերեն: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտության մեջ 1311 համարի ներքո, աստղանիշով: Թ 135	
Հայրապետլերին քիթապլարը տին միւճատելերինտէ ֆայիտելերի իւզերինէ պիր ըիսալէ: Փարիզ շէրինտէ ֆրանսըզ բարեկարգեալ Քիլիսէնին փափասլարընտան պիրի օլան Յովհան Տայլէնին քիթապընտան իճմալ օլունմուշտուր.- Զմյուռնիա: Տպ. Գուլիելմոս Գրիֆիտի, 1845.- ԺԲ, 304 էջ: Հայատառ թուրքերեն: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտության մեջ 1358 համարի ներքո, աստղանիշով: ՀԱԳ օրինակում բացակայում են 292-293 էջերը: Թ 135	
Փափանըն իտտիալերի. -Զմյուռնիա: Տպ. Գուլիելմոս Գրիֆիտի, 1845.- 108 էջ: Հայատառ թուրքերեն: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտության մեջ 1361 համարի ներքո, աստղանիշով: Թ 135	



¹Զարբհանայան Գարեգին, Պատմություն հայկական տպագրության սկզբնաւորութենէն մինչ առ մեզ, Վենետիկ, 1895:

²Ղազիկյան Արսեն, Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կենսքի, հտ. 1-2, Վենետիկ, 1909-1912:

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

	
Իջքի իւզերինէ: Պիրինճի տետրակ (Ա տետր): Միւսքիւրտէն հասիւօլան վագրթ վէ ազչէ Թէլէֆի.- Զմյուռնիա: Տպ. Գուլիելմոս Գրիֆիտի, 1845.- 41 էջ Հայատառ թուրքերէն: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտության մեջ 1355 համարի ներքո, աստղանիշով: Թ 135	
Քրիսթիան քիլիսէսինին թէվարիխի: Իլմի իլահի միւտերիպէրինտէն Ք. Ս. Պարթ նամ ա'լիմ միւլէլիֆին նէմչէ լիսանընտա թէլիֆ էտէն թիրքի լիսանընա թէրճիիմէ օլունտու.- Զմյուռնիա: Տպ. Գուլիելմոս Գրիֆիտի, 6 չհ. 402 էջ: Հայատառ թուրքերէն: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտության մեջ 1337 համարի ներքո, աստղանիշով: ՀԱԳ օրինակում բացակայում են 28-35, 209-214, 401-402 էջերը: Թ 135	
Մարիամ ատընտա պիր քիւչիք գըզըն նաքլիէթի. Զմյուռնիա տպ. Գուլիելմոս Գրիֆիտի, 1844.- 168 էջ: Հայատառ թուրքերէն: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտության մեջ 1305 համարի ներքո, աստղանիշով: Թ 135	
Հերքումն մուլար դրութեանն արձակման, խոստովանութեան և ապաշխարութեան. Զմյուռնիա: Տպ. Գուլիելմոս Գրիֆիտի, 1852.- 99 էջ: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1851-1900 թվականներին» մատենագիտության մեջ 113 համարի ներքո, աստղանիշով: Ղ հտ. 1, 1561: Զ Մատ. 352	

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Հարթագուկ: Քարտեզ.- Վիեննա: Տպ. Մխիթարյան, 1850 Անվանացոյց՝ Յարթագուկ: 1. Երկրի, 2. Երկնից, 3. Մեծագոյն մասին ցամաքի եւ ջրոյ, 4. Կոպեռնիկեան կարգ մոլորակաց, 5. Երկրագունդ, 6. Բարձրութիւնք լեռանց, 7. Համեմատական պատկեր մեծագոյն գետոց: Անվանացոյցը գտնվում է քարտեզի ներքնի աջ մասում զարդանկարի մէջ: Ծրագր. Հ. Աղեքս. Վ. Պալճեան ի Մխ. Ուխտէ: Մասշտաբը՝ նշված չէ: Չափը՝ 47x60,6 սմ: Քարտեզը նկարագրվել է «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտության մեջ 1638 համարի ներքո, աստղանիշով: Ղ. 1. 1533	
Գիրք սաղմոսաց Դաւթի. Վիեննա: Տպ. Մխիթարյան (Ի վանս Պաշտպան Ս.Աստվածածնի), 1852.- 309, 7 չի. էջ: Տիտղոսաթերթը՝ զարդափակ: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1851-1900 թվականներին» մատենագիտության մեջ 133 համարի ներքո, աստղանիշով: Վերնագիրը նշվել է «Սաղմոս Դաւթի», էջակալումը՝ 345՝ ըստ Մխիթարյան գրացուցակի: Զ Մատ., 607: Լիակ. ցուց. Վենետ. Մխիթ., 1934, 89: Ցուց. Վենետ. Մխիթ., 1960, 104	
Տեառն Աւգոստեայ Սիպուր Փարիզու արքեպիսկոպոսի պատուիրանագիր առ ուխտ եւ առ հաւատացեալս իւրոյ վիճակին /Թարգմ. Հ. Գաբրիէլ վրդպ. Այվազովսքի ի Մխիթ. ուխտէն՝ Տեսուչ Մուրատեան վարժարանին.- Փարիզ: Տպ. Շիլլերի, 1852.- 74 էջ: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1851-1900 թվականներին» մատենագիտության մեջ 144 համարի ներքո, աստղանիշով: Վերնագիրը նշվել է «Փարիզու արքեպիսկոպոսին (պատուիրանագիր) առ ուխտ և հաւատացեալս իւրոյ վիճակին»: Զ Մատ. 687: Թ 152	
Տաճար Մուսայից: Թանգարան ազգային երգոց.- Կ. Պոլիս: Տպ. Հովհաննէս Մյուհենտիսյանի, 1861.- 18 էջ: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1851-1900 թվականներին» մատենագիտության մեջ 1028 համարի ներքո, աստղանիշով: Զ մատ. 661: Թ 80	
Սաղմոսարան. Վենետիկ: Տպ. Անտոնի Բորտոլիի, 1695.- 368 գծափակ էջ: Տիտղոսաթերթ՝ ՍԱՂՄՈՍ/Ի ԴԱԻԻԹ /Փոքր Սաղմոս որ և Սաղմոսարան կոչի Տպա / գրեալ եղև ի գեղեցկաշէն մայրաքաղաքն) Վանատիկ ի տունն Աթոնիոս Պորթօլի Ի թ/վականութեանն Հայոց մեծաց: ռճխգ:/	

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գիրքը թերի օրինակ է, սկսվում է 131-րդ էջից: Բացակա են հետևյալ էջերը՝ 167-170, 209--210 : Մամուլանիշերը լատինատառ: Գլխագարդեր, լուսանցազարդեր և զարդագրեր: Բնագիրը՝ բոլորագրերով: Շարվածքը՝ 12,5X7,5 սմ: Խիստ թերի լինելու պատճառով ազգային գրադարանի օրինակը գրանցված է եղել, որպես 1873 թվականի Սաղմոսարան, սակայն ստուգումների արդյունքում պարզվել և գրանցվել է ճիշտ տարեթիվը 1695: Գիրքը նկարագրվել է «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագիտության մեջ 162 համարի ներքո, աստղանիշով: Կա նշում. «Նկարագրությունը կատարված է ըստ Գ. Բամպուքճյանի տված տեղեկության և Վ. Ներսեսյանի ուղարկած լուսապատճենի: Վերջինիս տիտղոսաթերթին հայոց թվականը ռճխգ (1694) է»:	Տիտղոսաթերթ չունի
---	-------------------------------------

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՃԱԿԱՏԱԳԻՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ.
ԹԷՈՏՈՐԱ ԹՈՒԵՒԱՅԻՆ ԳԻՐՔԸ ՊՈՒԼԳԱՐԻՈՅ ՄԷՋ**

2014 թուականի աւարտին լոյս տեսաւ երիտասարդ պուլկար պատմաբանի մը աշխատութիւնը, որը հազուադէպ երեւոյթ է Պուլկարիոյ արդի տպագրութեան ոլորտէն ներս¹:

Հեղինակը՝ Թէոտորա Թուլեան, ծնած է 1968 թ., նախնական կրթութիւնը ստացած է Սոֆիայի ֆրանսերէն լեզուի դասաւանդմամբ բարձրագոյն վարժարանը, ապա աւարտած է Պուլկարիոյ Ամերիկեան համալսարանը (AUBG), մագիստրոսի կոչումը ստացած է Պարսելոնայի Ավթոնոմ Համալսարանի Արդիական պատմութեան ամբիոնէն 2006 թուականին: Երկու տարի անց՝ 2008 թ. Պաշտպանած է պատմութեան ճոռով եւրոպական ատենախօսութիւն՝ Պարսելոնայի, Լոնդոնի եւ Վիեննայի համալսարաններու ներկայացուցիչներէն կազմուած մասնաժողովի առջեւ: Մայրենի պուլկարերէնէն զատ կը տիրապետէ ֆրանսերէն, անգլերէն, ռուսերէն, գերմաներէն, իսպաներէն, իտալերէն, պորթուգալերէն լեզուները: Սակայն 2012 թուականին երիտասարդ եւ խոստումնալից գիտնականը իր մահկանացուն կը կնքէ՝ անաւարտ ձգելով այլ հետազոտութիւններ ու պրպտումներ: Մինչ այժմ պուլկարերէն լեզուով լոյս տեսած են նաեւ «Տիւլա Անտրաշի արտաքին քաղաքականութիւնը եւ Մաքետոնեան հարցի ծագումն» (2012), «Աւստրո-Հունգարիայի ազդեցութիւնը ալպանական ազգի ստեղծման վրայ» (2013) գիրքերը:

Ներկայացուող աշխատութիւնը ստեղծուած է երեք հիմնական նպատակներ հետապնդելով: Առաջինը՝ ներկայացնել մինչեւ հիմա անտիպ եւ անյայտ փաստաթուղթ մը 1896թ. թուակիր, որը գտնուած է Վիեննայի կայսերական եւ թագաւորական արխիվին մէջ, որը կը վերաբերուի Օսմանեան կայսրութեան մէջ կատարուած Հայոց ցեղասպանութեանը: Երկրորդ նպատակն է, որ հեղինակը կը ցանկանայ հետազոտող Վահագն Տատրեանի ոճին համապատասխան բացայայտել Հայկական եւ Արեւելեան հարցերու միջեւ գոյութիւն ունեցող կապը, ընդ որում ան կը միանայ այն պատմաբաններուն, որոնք կ'ընդունին տեսակէտը, որ խօսքը կը վերաբերի մէկ ընդհանուր գաղափարի, այլ ոչ թէ 2 տարբեր, առանձին, բայց միմեանց հետ հանգուցուած հարցերու: Եւ երրորդ նպատակն է, որ արդի արեւմտեան հայագիտութեան հետ համատեղ (յատկապէս նկատի ունենալով ամերիկեան, անգլիական եւ ֆրանսական ճիւղերը) ներկայացնէ աշխարհիս հնագոյն ժողովուրդներէն մէկուն ճակատագիրը եւ ներկայիս Եւրոմիութեան դէպի արեւմուտք ընդլայման պայմաններուն մէջ

¹ Թէոտորա Թուլեա, Ցեղասպանութիւն եւ ճակատագիր հայ ժողովուրդի, Սոֆիա: «Միելա» հրատ., 2014.- 176 էջ:

հայոց ցեղասպանության ճանաչման դրույթները եւ Թուրքիոյի վիճելի անդամակցութիւնը Եւրոմիութեան կազմին մէջ:

Փաստաթուղթը, որը հեղինակը կը ներկայացնէ քաղաքական-տնտեսական ուսումնասիրություն Մամիւրէթ իւլ Ազիզ օսմանեան վիլայեթի վերաբերեալ, պատրաստուած է Աւստրո-Հունգարական հիւպատոս Կ. Զագուլիչի կողմէ 1896 թուականի Դեկտեմբերին: Վիեննայէն կը պատուիրեն իրենց հիւպատոսին պատրաստել այդ զեկոյցը, քանի որ հայերուն կոտորածներու վերաբերեալ յստակ տեղեկութիւններու կարիք ունեն եւ մանաւանդ որ Մամիւրէթ իւլ Ազիզ վիլայեթի մէջ կատարուած սպանդին հետեւանքով իրենց կեանքը կորցուցած են աւելի քան 200 000 հայեր:

Հիւպատոսին բազմաբովանդակ եւ ուշադիր շարադրուած տեղեկութիւնները բաւական լաւ պատկեր կուտան տնտեսութեան, բնակչութեան եւ ընդհանրապէս տեղուոյս կեանքին վերաբերեալ: Աւստրո-Հունգարան՝ ըլլալով Գերմանիոյի, հետեւաբար նաեւ Օսմանեան կայսրութեան դաշնակից, իր իսկ գոյութիւնը պահելու համար կը սեպէ, որ Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը պէտք է պահպանուի, ուստի շահագրգիռ է, որ կատարուածը ծածկուի, ուստի եւ կը խուսափի բացասական գնահատականէ կատարուած հանցագործութիւններուն վերաբերյալ:

«Ցեղասպանութիւն եւ ճակատագիր հայ ժողովուրդի» վերնագրով գիրքը բաղկացած է քանի մը մասէ՝ ներածութիւն, հայ ժողովուրդի համառոտ պատմութիւն մինչեւ Օսմանեան կայսրութեան սահմաններէն ներս ընդգրկուիլը, հայկական հարցի եւ արեւելեան հարցի ծագումը, զեկոյցի համառոտագրութիւնը, 1915թ. հայոց ցեղասպանութիւնը, ցեղասպանութիւն հասկացողութիւնը, անկախութեան մասին վերջաբանը, բուն զեկոյցը, Մամիւրէթ իւլ Ազիզ վիլայեթի նկարագրութիւնը, օգտագործուած գրքերու ցանկ, քարտէսներ, բնակչութեան 1896 թ. մարդահամարի տուեալներ:

Նախ «Ներածութեան» մէջ հեղինակը կը բացատրէ, որ այս գիրքը կը գրէ իսպանացի ընթերցողին համար՝ զայն ծանօթացնելու այն պատմական փաստերուն հետ, որոնց մասին տեղեկութիւններ կան արխիվներուն մէջ, սակայն զանոնք լայն տարածում չունին: Հեղինակը նաեւ կը նշէ մասնաւորապէս Ցեղասպանութեան հարցով զբաղուող Վ. Ն. Տատրեանի, Բաթ Եօրի, Մարք Նշանեանի եւ այլոց անունները ու գործունեութեան պատմական հանգամանքները: Նշուած է ժամանակի իրավիճակը, հզոր պետութիւններու կողմէ հետապնդուող քաղաքականութիւնը՝ Ռուսաստանի ցանկութիւնը Տարտանէլ եւ Պոսֆոր նեղուցներով դէպի Միջերկրական ծով դուրս գալու հնարավորութիւնը, Անգլիոյ մտադրութիւնը՝ դէպի Հնդկաստան տանող ճանապարհներու ապահովութիւնը պահպանելու վերաբերեալ եւ չձգել, որ Ռուսաստանը Կովկասէն մօտենայ այդ ճամբաներուն:

Յաջորդ մասը՝ «Հայոց պատմութիւնը մինչեւ Օսմանեան կայսրութեան շրջանը» համառոտ կը ներկայացնէ պատմութիւնը՝ ըստ Ռոբերտ Հ. Հիւսենի, Ջեյմս

Ռասելի, Նինա Գարգոեանի, Ռոբերտ Պետրոսեանի, Անի Ադամեանի, Բուրնոթեանի, Ռիչարտ Հովհաննիսեանի, Ջեյմս Իսսավերտենսի:

«Հայերը Օսմանեան կայսրութեան մէջ» մասը որպէս հիմք ունի Վարդան Արթինեանի ուսումնասիրութիւնը, որը ըստ հեղինակի՝ կը ներկայացնէ թանկարժէք ներդրում մը նշուած հարցին առնչութեամբ եւ տեղեկութիւններով լի է: Յակիրճ, բայց իրատեսօրէն կը ներկայացնէ հայերուն դիրքը, կացութիւնը, քաղաքական կողմնորոշումը:

Յաջորդ մասին մէջ Թ. Թովեան կը բացայայտէ Եւրոպական պետութիւններուն՝ Անգլիոյ, Ռուսաստանի եւ Աւստրո-Հունգարիայի քաղաքական հետաքրքրութիւնը Օսմանեան կայսրութեան հանդէպ, նամանաւանդ՝ դէպի Միջերկրական ծով դուրս գալու ցանկութիւնը եւ Հնդկաստանի ու առհասարակ Ասիոյ մէջ ճանապարհները ապահովելու եւ դիրքերը ընդլայնելու ախորժակները: «Արեւելեան եւ հայկական հարց»-ին ծագումն, տարբեր ծրագրերն եւ ի վերջոյ Սան-Սթեֆանոյի եւ Պելլինեան համաժողովներուն թեքսթերը մէջբերելով՝ կը տրուի տեղեկութիւն Համիտեան շարժման, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հայկական կուսակցութիւններուն կազմակերպման ու դիրքորոշման վերաբերեալ:

«Ձեկոյցին ամփոփում» գլուխը 20 էջերու վրայ վերլուծանաբանօրէն կ'ամփոփէ բուն զեկոյցը: Աշխարհագրական անբարենպաստ եւ տնտեսական գրեթէ ոչ մէկ զարգացած ոլորտ չունեցող այս վիլայեթին մէջ, ի զարմանս հեղինակի, կրթական համակարգը շատ լաւ կը գործէ՝ գլխաւորապէս հայերուն քով: Մամիւրէթ իւլ Ազիզ վիլայեթին տնտեսութեան մասին եւ այլ տվեալներէ յայտնի կը դառնայ, որ 5-14 տարեկան հայ երեխաներէն այլ ազգերու հետ համեմատած, աւելի մեծ թիւ կը կազմեն դպրոց գացող աշակերտները: Աշակերտներուն տոկոսային հարաբերութիւնը՝ ազգաբնակչութեանը համապատասխան կը կազմէ՝ մահմետականներ 22,76 %, հայեր (առաքելական աւանդական եկեղեցի) 52,42 %, բողոքականներ 46,26 %, կաթողիկէ հայեր 70 %, քաղդէացիներ 50,30 %, ընդ որում նկատի պէտք է ունենալ, որ բողոքականներու մէջն ալ պիտի ըլլան հայեր: Տեղեկութիւն կը տրուին նաեւ ծախսերու վերաբերեալ: Մահմետական կրօնական դպրոցներուն ծախքը կը հոգան գրասիրաց կազմակերպութիւնները, աշխարիկներունը՝ պետութիւնը, հայկական աւանդական առաքելականներունը՝ Կոնստանդնուպոլսի դպրոցական ընկերութիւնները, բողոքականներունը՝ անգլիական եւ ամերիկեան աւետարանչական ընկերութիւնները, հայ-կաթողիկէներունը՝ քափուսիններու ուխտը եւ ֆրանսիսքան քոյրերը: Ավստրիոյ հիւպատոսը կը նշէ, որ այդ տուեալները ջարդերէն յետոյ մեծ փոփոխութիւններու կ'ենթարկուին, նամանաւանդ աւանդական առաքելական եկեղեցւոյ դպրոցները ընդանրապէս բոլորովին կ'ամայանան եւ կը լքուին, Մալաթիոյ կաթողիկէ եկեղեցին եւ դպրոցը կը հրդեհուին: Վիլայեթին մէջ դեռեւս ջարդերէն առաջ կը նկատուի արտագաղթ դէպի Կոնստանդնուպոլիս եւ Ամերիկա՝ որպէս հետեւանք թուրք կառաւարման եւ պաշտօնեաներու անգործութեան քրդական հարձակումները ճանապարհներուն ու թալանի պատճառով: Հուպատոսը կը նշէ, որ

վերջին տասը տարիներու ընթացքին ապրանքներուն արտահանումը շոշափելիորեն նուազած է: Ամենէն արտահանուողներէն՝ ծիրանի կուտը, կաշին, բուրդը, կակաչի հունտը, նուշն ու տարբեր չիրերը, մետաքսէ եւ բամբակէ կերպասները, օճառը, այծի կաշին եւ այլն ապրանքներ էին: Վերոնշուածներէն առաջինները Ալեքսանդրիան կը տարուէին այլ երկիրներ, իսկ մնացածը կ'երթային կայսրութեան այլ նահանգներ: Նշուած ապրանքներու գլխաւոր գնորդներն էին Անգլիան (16,06 %), Ֆրանսան (13,50 %), Ռուսաստանը (3,60 %): Վերջին տարիներուն աղքատանալուն եւ արտագաղթին (յատկապէս քրիստոնեայ բնակչութեան) պատճառներով ապրանքներու ներմուծումը նոյնպէս կը նուազի: Դրամական փոխադրումները Մամիւրէթ իւլ Ազիզ վիլայեթին մէջ կը կատարուին փոստի միջոցաւ: Զեկոյցին վերջին մասը՝ «Զարդեր» ենթավերնագրով հյուպատոսը կը պատմէ 1895 թուականի Նոյեմբեր 10-ին Խարփուտի հայերուն վրայ կատարած հարձակումին մասին եւ կը վերապատմէ հայ եպիսկոպոսի գրառումները իր Խարփուտ քաղաքի եւ մօտակայ 73 գիւղերու վերաբերեալ՝ 4442 զոհեր, 1861 հրդեհուած տուններ, 12 վառուած եկեղեցիներ, 7664 հոգի բռնի կերպով ստիպուած են ընդունիլ իսլամը... Տեղեկութիւններ կը տրուին նաեւ Արաբկիրի, Ամբարակի, Շենիկ Խաջին, Մալաթիա եւ այլն քաղաքներու ու շրջաններու 1895 թ. Նոյեմբեր-Դեկտեմբեր ամիսներու ընթացքին տեղի ունեցած յարձակումներու մասին:

Գրքին յաջորդ մասը «1915 թուականի հայոց ցեղասպանութիւնը» վերնագրով կ'ուտայ Քրիսթոֆեր Ուալթերի (Cristopher J. Walter) եւ Ռիչարտ Հովհաննիսեանի (Richard G. Hovannisian) գիրքերուն ամփոփ բովանդակութիւնը՝ որպէսզի ժամանակակից ընթերցողին պարզաբանէ եւ ծանօթացնէ հարցի որոշ կողմերուն:

Մեր օրերու եւրոպական ընթերցողին համար հեղինակը մասնաւորապէս կը բացատրէ «Հասկացողութիւն ցեղասպանութեան մասին»: Համանուն վերնագրով յատուկ բաժնի մէջ կը ներկայացնէ Ռաֆաէլ Լեմբինի կողմէ «ցեղասպանութիւն» բառին ձեւակերպումը եւ օգտագործումը: Նաեւ կը տրուի ՄԱԿ եւ այլ միջազգային կազմակերպութիւններու կողմէ յայտարարուած եւ ընդունուած բանաձեւերն ու կոնվենցիաները: Հայոց ցեղասպանութիւնը պաշտօնապէս օրենքի ուժով ճանաչած պետութիւններու ցանկն ալ կը տրուի:

«Վերջաբան՝ դէպի անկախութիւն» գլուխին մէջ ամփոփ կը ներկայացուի Ռ. Հովհաննիսեանի գիրքին այն մասը, որը կը վերաբերի պատմական փաստերուն եւ Հայկական առաջին հանրապետութեան հռչակմանը:

Ի վերջոյ՝ իբեւ Հավելում տրուած է Աւստրո-Հունգարական հիւպատոս Կ. Զագուլիչին «Մամիւրէթ իւլ Ազիզ վիլայեթին տնտեսական եւ քաղաքական ուսումնասիրութիւն» զեկոյցի թարգմանութիւնը՝ գաւառներուն եւ բնակչութեան մարդահամարի աղիւսակներուն հետ միասին:

«Օգտագործուած գիրքերու ցանկը» ու հեղինակին կողմէ տրուած քարտէսները գիրքին վերջը կը կազմեն:

Երիտասարդ պուկարուհիին այս աշխատութիւնը մեծ գնահատականի արժանի է, քանզի՝

- ի սկզբանե նախատեսուած է ոչ հայ ընթերցողի համար, կը համատեղէ միջազգային յայտնի այլազգի եւ հայ հեղինակներու տեսակետները,
- միայն մէկ փաստաթուղթի հիման վրայ կը նկարագրէ տասնամեակներու ողբալի պատմութիւնը,
- կը բացայայտէ հայոց հարցի եւ ցեղասպանութեան ծագումը, ինչպէս նաեւ միջազգային հանրութեան վերաբերմունքն այդ խնդիրներուն,
- հակիրճ կը ներկայացնէ հայ ժողովուրդի դարաւոր պատմութիւնը եւ հանրապետութեան ձեւաւորումը,
- մէջբերումով կուտայ հիմնական միջազգային փաստաթուղթերու բովանդակութիւնները ցեղասպանութեան վերաբերեալ,
- շարադրութեան մատչելի լեզուն, որը կը գրաւէ կարդացողին եւ կը ստիպէ մէկ անգամէն ընթերցել ամբողջ գիրքը:

Նախատեսուած ի սկզբանէ եւրոպական, եւ աւելի ճիշդ՝ իսպանական ընթերցողի համար, այս գիրքը հետաքրքիր պիտի ըլլայ այլազգի լայն հանրութեան համար ինչպէս նաեւ հայկական ծագում ունեցող, բայց հայկականէն հեռու մնացած երիտասարդներու համար:

Ի շնորհիւ պուլգարական «Սիւլա» հրատարակչութեան Թէոտորա Թոլեւային 176 էջանի «Ցեղասպանութիւն եւ ճակատագիր հայ ժողովուրդի» գրքի, լոյս տեսած 2014, պուլգարական հանրութիւնը առ աւելի տեղեակ կ'ըլլայ երկրին մէջ ապաստան գտած հայերու ճակատագրի պատմութեանը:

Փաստաթուղթը, որը հեղինակը կը ներկայացնէ քաղաքական-տնտեսական ուսումնասիրություն մըն է Մամիւրէթ իւլ Ազիզ օսմանեան վիլայեթի վերաբերեալ, պատրաստուած Աւստրո-Հունգարական հիւպատոս Կ. Զագուլիչի կողմէ 1896 թ. Դեկտեմբերին: Փաստաթուղթը՝ հիւպատոսին զեկոյցը, գտնուած է Վիեննայի կայսերական եւ թագաւորական արխիվին մէջ եւ կը վերաբերուի Օսմանեան կայսրութեան մէջ կատարուած հայոց ցեղասպանութեանը:

Գիրքը նաեւ կը ներկայացնէ աշխարհիս հնագոյն ժողովուրդներէն մէկուն ճակատագիրը եւ ներկայիս Եւրոմիութեան դէպի արեւմուտք ընդլայման պայմաններուն մէջ հայոց ցեղասպանութեան ճանաչման դրութիւնը եւ Թուրքիոյ վիճելի անդամակցութիւնը Եւրոմիութեան կազմին մէջ:

ԽՈՐԵՆԱՑԻԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ՆՐԱ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Համաշխարհային գրականության պատմության մեջ անվանի գործիչների շարքում առանձնահատուկ տեղ ունի Մովսես Խորենացին, ում նկատմամբ անսահման հետաքրքրությունն ու սերը մշտապես ոգեշնչել են բազմազգ ընթերցողներին: Հատկապես նրա «Հայոց պատմության» գիտական ուսումնասիրությամբ զբաղվել են հայ և օտարազգի բազմաթիվ գիտնականներ՝ բարձր գնահատելով Պատմահոր գլուխգործոցը: Դարերի ընթացքում ստեղծվել է խորենացիագիտական-հայագիտական հսկայածավալ գրականություն, ինչի վկայությունն է ԵՊՀ-ի Հայոց պատմության ամբիոնի նախկին վարիչ (2013-2016 թթ.), պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի (1944-2016) հեղինակած «Մովսես Խորենացի: Մատենագիտություն» գիրքը¹:

Այս արժեքավոր մատենագիտությունն աչքի է ընկնում մեթոդաբանական յուրահատուկ կառուցվածքով, գրքի պատմության և մատենագիտության միահյուսված համակարգով: Առաջին մասը (էջ 9-42) նվիրված է Պատմահոր երկասիրություններին և բաղկացած է երեք ենթաբաժիններից: Առաջինում ժամանակագրական կարգով նկարագրված են Խորենացու «Պատմություն Հայոցի» բնագրի 18 հրատարակություններ՝ սկսած ամստերդամյան տպագրությունից՝ 1695 թ. մինչև 2003 թ.: Այնուհետև՝ Պատմության բնագրի համաբարբառների 4 տպագիր միավոր, աշխարհաբար թարգմանությունների 14 հրատարակություն (1889-2003 թթ.), ինչպես նաև հայ և օտարազգի հեղինակների այլ լեզուներով կատարված 26 թարգմանական հրատարակություններ՝ ընդգրկելով 1736-2011 թթ.: Այս բաժնում հավելյալ տեղեկություն է տրված ևս 7 այլալեզու (թուրքերեն, գերմաներեն, շվեդերեն, ֆրանսերեն)՝ ոչ պակաս մատենագիտական կարևորություն ներկայացնող հրատարակությունների մասին: Երկրորդ ենթաբաժինը (էջ 43-78) նվիրված է «Պատմություն Հայոցի» առանձին հատվածներին՝ ներառելով 1735-2011 թթ. Կատարված 116 հայերեն և 1723-2001 թթ. կատարված լատիներեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով 48 տպագիր հրատարակություններ: Երրորդ ենթաբաժնում (էջ 79-111) արտացոլված են Խորենացու այլևայլ և նրան վերագրվող երկերի («Աշխարհացոյց», «Գիրք Պիտոյից», «Ալեքսանդր Մակեդոնացու պատմություն», շարականներ, տաղեր, քերականագիտական երկեր, ասույթներ) ավելի քան 143 հայալեզու և օտարալեզու հրատարակություններ՝ տպագրված 1668-2008 թթ.:

¹ Հովհաննիսյան Պետրոս, Մովսես Խորենացի: Մատենագիտություն, Ե.: ԵՊՀ, 2013.- 436 էջ:

Մատենագիտության երկրորդ մասը (էջ 113-370) Մովսես Խորենացու մասին գրականությունն է: Այստեղ, բացի V-XVII դդ. 30 աղբյուրներից, նկարագրված են մինչև XXI 10-ական թվականները լույս տեսած տպագիր գրքերն ու բազմանուն պարբերականներում հրապարակված հոդվածները: Այբբենական կարգով կազմված այդ ընդարձակ ցանկը մեր հաշվումներով (համարակալված չլինելու պատճառով) հասնում է 1767 միավորի: Ընդ որում՝ հայալեզու աղբյուրների քանակը կազմել է 1213 (որից 115 անստորագիր), ռուսալեզու աղբյուրներինը՝ 243 (որից 16 անստորագիր) և այլալեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն) աղբյուրներինը՝ 311 միավոր (այդ թվում՝ 11 անստորագիր):

Պատմագրական տվյալների արժևորումը, սակայն, այսքանով չի ավարտվում. ներածությունում և նշված երկու մասերի համարյա բոլոր էջերի տողատակերում Պ. Հովհաննիսյանը տվել է նաև մոտ 486-ի հասնող մատենագիտական աշխատանքների, գրախոսականների և հոդվածների հղումներ, խորագնին հայացքով նյութերի համադրմամբ և սկզբունքային մոտեցմամբ կատարել է պատմատեղեկատվական, թվական և հայագիտական կարևոր ճշգրտումներ:

Մատենագիտության երրորդ մասը (էջ 373-410) Խորենացու «Պատմություն հայոցի» երկասիրողների կենսագրական բառարանն է, որի շնորհիվ ընթերցողը ծանոթանում է նաև հայ և օտարագրի 26 նշանավոր գործիչների հետ, որոնց դերը մեծ է ոչ միայն հայագիտության զարգացման, այլև պատմահոր Պատմության ուսումնասիրման, գնահատման ու տարածման գործում: Ակնառու է այն փաստը, որ յուրաքանչյուր հեղինակի մասին տրված է անհրաժեշտ գրականություն՝ կազմելով 45 միավոր: Տեղեկատվահաղորդակցական առումով առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև գրքում առանձնացված պարբերականների և տարեգրքերի անվանացանկը (էջ 413-424):

Այսպիսով, ընդհանուր առմամբ շրջանառության մեջ է դրվել խորենացիագիտական շուրջ 2730 միավոր գրականություն՝ տպագրված Ամստերդամում, Վենետիկում, Երևանում, Ս. Պետերբուրգում, Թբիլիսիում, Լոնդոնում, Փարիզում, Կահիրեում, Մոսկվայում, Թեհրանում, Վիեննայում, Լայպցիգում, Նյու Յորքում, Բեյրութում, Կ. Պոլսում, Էջմիածնում և այլուր: Առանց չափազանցության պետք է նշել, որ յուրաքանչյուր աշխարհագրական գրատպական կենտրոնի հեղինակությունը որոշակի աստիճանով կապված է եղել Խորենացու «Հայոց պատմության» տպագրության հետ: Ավելին՝ ցանկացած գրադարանի (թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս) հեղինակությունը նույնպես կապվում է ճանաչողական ու կրթադաստիարակչական լայն նշանակություն ունեցող համանուն պատմությունն ունենալու և սպասարկելու հետ:

Գրքի բովանդակային և վիճակագրական տվյալների համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ունի ոչ միայն հայագիտական անսահման նշանակություն, այլ նաև՝ խորը պատմականություն՝ ընդգրկելով V-XXI դարերը: Ժամանակագրական այդ տեսանկյունից էլ, մեր կարծիքով, գրախոսվող մատենագիտությունը համաշխարհային հայագիտության մեջ՝ խորենացիագիտության զարգացման ու

խորացման ուղղությամբ առայժմ չունի «մրցակից»: Ապագային միտված սույն հրատարակությունն ունի գիտատեղեկատվական և կիրառական լայն նշանակություն՝ հանդիսանալով Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում դասավանդվող «Հայագիտական մատենագիտություն» առարկայի ուսուցման օբյեկտը: